7781

ק1915
281.6
ף-64

# ՏԵՂԵԿԱԳԻՐ

## ԹԻՖԼԻՍԻ

## ԲԵԴՂԵՀԷՄ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒ

ԵՒ

## ԵՐԵՑՓՈԽԱՆԻ ՏԱՍՆԱՄԵԱՅ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ

ՈՒ

# ՀԱՇԻՒԸ

ԹԻՖԼԻՍ
Տպարան „Պրոգրէսս" Լօրիս-Մելիքեան, փ. 1.
1915

114-253a Ռ-64

# ՏԵՂԵԿԱԳԻՐ

## ԹԻՖԼԻՍԻ

—

## ԲԵԴՂԵՀԷՄ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒ

ԵՒ

## ԵՐԵՑՓՈԽԱՆԻ ՏԱՍՆԱՄԵԱՅ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ

ԵՒ

# ՀԱՇԻՒԸ

3401

ԹԻՖԼԻՍ
Տպարան „Պրօգրէսս" Լօրիս-Մելիքեան, փ. 1.
1915

22 APR 2013
7781
40597-67

# ՅԱՌԱՋԱԲԱՆ

Բեդղեհէմի ս. Աստուածածնի եկեղեցին լինելով Թիֆլիսի եկեղեցիներից ամենահիներից մէկը Թիֆլիսի թէ հայ թէ օտար ազգի հասարակութեան կողմից արժանացել է և արժանանում է մի առանձին ուշադրութեան և յարգանքի թէ իւր աշխարհագրական դիրքով և թէ նորանով որ գտնուելով դէպի բուսաբանական այգին տանող ճանապարհի վրայ, ամեն ամառ մեծ բազմութիւն Թիֆլիսի հասարակութեան այլ և այլ խաւերից անցնում է յիշեալ եկեղեցու գաւթով։

Բուսաբանական այգի գնացող թէ հայ և թէ օտար ազգի այցելուները հանգստանալով Բեդղեհէմի գաւթում, նրանք մի առանձին բաւականութիւն են զգում նախ Թիֆլիսի հրաշալի տեսարանով, որը փռւում է այդ եկեղեցու ստորոտի տակ, համարեա իւր ամբողջ արուարձաններով, որի միջով ոլորապտոյտ անելով Կուր գետը, քաղաքը երկու կէս է անում և նմանեցնում հրաշալի պանօրամայի։ Իսկ միւս կողմից հեռու հիւսիսային հորիզոնի վրայ տարածւող Կովկասեան լեռների ձիւնապատ լեռնաշղթան, ուր վիթխարի նման դուրս են ցցել իրենց յաղթական գագաթները Էլբրուսն ու Կազբէկը։

Շատ շատերը այդ այցելուներից մի փոքր կանգ առնելով գաւթում, հետաքրքրւում են նաև եկեղեցիով, նրա արդ ու զարդով, իսկ հայ եկեղեցուն նախանձախնդիրները և նրա ներքին կեանքով։

Ահա այդ եկեղեցին մինչև օրս չունենալով տպագիր որ և է տեղեկագիր նրա ունեցած գոյքի, նրա կառավարութեան, մուտքի և ելքի մասին, կարևոր համարեցինք սոյն տեղեկագիրը լոյս ընծայել առանձին գրքոյկով ի նկատի ունեցած նախ հայ հասարակութեան հետաքրքրութիւնը և երկրորդ վերջ տալու այն աւելորդ ասէկօսէներին, որոնք պտտւում են հասարակութեան մէջ եկեղեցու ունեցած թանկագին ակն ու մարգարիտների, ոսկի և արծաթի մասին, մանաւանդ որ ծխականները իրենք իսկ ցանկութիւն յայտնեցին ունենալ այդպիսի տպագիր տեղեկագիր. բացի նրանից տպագրութեան տալով եկեղեցու շարժական և անշարժ գոյքի ցուցակը և նրա մտից և ելից հաշիւը սկսուած 1906 թւից մինչև ներկայ 1915 թիւը որով նախ սկիզբ կդրւի ապագայում կորստի առաջն առնելու եկեղեցու գոյքը, որովհետև կդառնայ ընդհանուրի սեփականութիւն և երկրորդ կպարզւի երեսփոխան պ. Վասիլ Ալանեանի գործունէութեան տասնամեայ արդիւնքը։

# ԵԿԵՂԵՑՈՒ ՄԻԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ

Բեդղեհէմի ս. Աստուածածին եկեղեցին ունի երկու միաբան քահանայ, որոնք ամենայն համերաշխութեամբ և սիրով կատարում են իրենց պաշտօնները և ձեռք ձեռքի տուած մխիթարում ոչ միայն իրենց եկեղեցու ծխականներին այլ և բազմաթիւ օտար այցելուների՝ Եկեղեցու շահը և օգուտը գերադասելով անձնականին. Նրանք՝ բացի եկեղեցի այցելուներից, հոգևոր մխիթարութիւն են տալիս նաև այն բազմաթիւ պատահական անցորդների, որոնք ամառները անց ու դարձ են անում եկեղեցու գաւթով։

Հոգևոր իշխանութեան կարգադրութեամբ առաջ երէց նշանակուած է Գէորգ ա. քահանայ Մեհրաբեանը որ իւր կրթութիւնը աւարտելով 1885 թւին Ներսիսեան դպրոցում, իսկ յետոյ Ճեմարանի ս. լսարանում նախ պարապում է հայ ծխ. դպրոցում ուսուցչութեամբ և ապա քահանայ ձեռնադրւում 1895 թուին։ Բեդղեհէմ եկեղեցի տեղափոխւում է 1898 թւին։ Սկսած 1899 թ. Որբոց և Արեաց հոգևորականների գանձապահ է և կրօնուսոյց 3-րդ իգ. գիմնազիայում և քաղաքային դպրոցներում։ Երկրորդ քահանան է Յովսէփ ա. քահանայ Աբուլեանը, որը նոյնպէս իւր կրթութիւնը աւարտել է Ներսիսեան դպրոցում, վարել ծխ. դպրոցում կրօնուսուցչի պաշտօն և ապա 1896 թուին ձեռնադրուելով քահանայ նշանակւում է սոյն եկեղեցու միաբան։ Ներկայիս վարում է նաև կրօնուսուցչի պաշտօն պետական զանազան դպրոցներում։

# ԾԽԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԴՊՐՈՑ

Միաբանների և երեսփոխան Վասիլ Աւանեանի սրտի փափագը և տենչը ծխական դպրոց ունենալն էր։ Վաղուց էր այդ միտքը տանջում նրանց, սակայն եկեղեցու տնտեսական դրութիւնը և նիւթական սղութիւնը չէին թոյլ տալիս այդ փափագը ի կատար ածել։

Ծխական դպրոցը եկեղեցուց իբրև մի անբաժան մարմին համարելով մի ելք էին փնտռում նրա բացումը իրականացնելու և ահա նրանց մէջ ծագում է մի միտք, որով հնարաւորութիւն է տրւում թէ եկեղեցու տնտեսական դրութիւնը բարելաւելու և թէ ծխական դպրոցի գոյութիւնը ընդ միշտ ապահովելու։

Գործը թէև կապուած էր մեծ դժուարութիւնների և ռիսկի հետ սակայն ուր սէր և միաբանութիւն կար, ընկճուել և վախենալ պէտք չէր։

Եկեղեցին Մողնոյ II նրբափողոցում ունէր մի կտոր գետին, որը ոչ մի արդիւնք չէր բերում բացի ծախսից։ Որոշւում է այդ գետնի վրայ կառուցանել մի երկյարկանի տուն, որի արդիւնքը ապագայում կարող էր ընդ միշտ ապահովել դպրոցին։ Եկեղեցին պատրաստի այնքան դրամ թէ և չունէր բայց շնորհիւ միաբանների և երեսփոխանի ջանքերի 1909 թուին ձեռնարկւում է այդ շինութիւնը և աւարտւում 1910 թւին, ծախսելով 6515 ր. 47 կ. որպիսի գումարը հետզհետէ հանգցնելով, այժմ այդ շինութիւնը, որ արժէ աւելի քան 10,000 րուբլի, անպարտք մնացել է եկեղեցու սեփականութիւն, շնորհիւ երեսփոխան Վասիլ Աւանեանի։ Բարի գործը միշտ նախանձողներ է առաջ բերում և ահա այդ շինութեան շուրջը մի քանի անձնաւորութիւններից առաջացան զանազան բողոքներ, որոնց մասին բացատրութիւնը ընթերցողը կ՛տեսնի ստորև։

Այժմ Բեդղեհէմի եկեղեցին ունի իւր սեփական ծխական դպրոցը, որը զետեղուած է նոյն եկեղեցու գաւթում և բաղկացած է Ա. բաժանմունքից, որը այս տարի կունենայ Բ. բաժ. սովորում են «40» աշակերտ։ Ունի մէկ ուսուցիչ և մի վարժուհի և տարեկան ծախս լինում է մօտաւորապէս 1000 րուբլի։

## ԵԿԵՂԵՑՈՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ

*Համաձայն եկեղեցական կանոնադրութեան ինչպէս ուրիշ եկեղեցիներում այնպէս և Բեդղեհէմի ս. Աստուածածին եկեղեցու տնտեսական կառավարութիւնը յանձնուած է երեսփոխանին։*

*Մինչև 1913 թիւը, երբ հոգևոր կառավարութեան կարգադրութեամբ երեցփոխի հետ զուգընթաց սկսեցին գործել նաև ծխական հոգաբարձուները։ Յիշեալ եկեղեցու երեսփոխան Վասիլ Ռոմանովիչ Աւանեսեանը ընտրուած է ծխականներից և հաստատուած իւր պաշտօնի մէջ հոգևոր իշխանութեան «4 փետր» 1904 թ. հրամանով։ Վերընտրած և հաստատուած 4-ին յուլիսի 1907 թ. և 8-ին հոկտ. 1910 թ.։ Ստանձնելով եկեղեցու շարժական և անշարժ գոյքը երեսփոխանը ամենայն ջերմեռանդութեամբ գործի կպաւ, որպէսզի նրա տնտեսական քայքայեալ վիճակը բարելաւի։*

*Նախկին երեսփոխանութիւնից նա ստացել է բաւխ բունիշանակութեամբ աւերակ կալուածներ և մի փոքրիկ գումար որպիսին գտնուելով Աւետրական դրամատանը, ծխականներից ոչ մի հրահանգութիւն չունէր գործադրելու եկեղեցու կալուածների վերանորոգութեան համար, բացի սորանից գումարի քանակը փոքր լինելով մանր մունր կարկատաններով եկեղեցին ոչ մի շօշափելի օգուտ չէր ստանալ, ուստի և հարկաւոր էր եկեղեցու գումարը հասցնել մի որոշ քանակի որպէսզի հնար լինէր հիմնովին մի շինութիւն անել, որպէսզի ընդ միշտ կարելի լինէր տարէ ցտարի ստանալ մի խոշոր եկամուտ։ Ինչպէս վերը տեսանք, երեսփոխան Վասիլ Աւանեսովի տենչը կատարուեց և եկեղեցին ստացաւ մի նոր կալուած, որը ապահովեց թէ դպրոցի նիւթականը և թէ եկեղեցին։*

*Սակայն երեսփոխի պաշտօնը շատ փափուկ պաշտօն լինելով և մատչելի ամեն մի անհատի կրիտիկային կամ քննութեանը գտնուեցան մարդիկ, որոնք ինչ ինչ դիտումներ արին Աւանեսեանի երեսփոխանութեան հասցէին, որոնք ինչպէս ստորև կը տեսնէ հասարակութիւնը ամենևին չեն համապատասխանում ճշմարտութեանը և այդ լոկ անձնական դրդման պէտքէ վերագրել։ Իսկ հասարակական գործը, այն էլ մեր ժամանակում, վարել այնպէս որ ամեն մի անհատի հաճոյքով կամ տեսակէտով լինի անկարելի է, ուստի և խղճի ամենայն մաքրութեամբ հերքելով յարգելի հաշուատեսների նկատողութիւնները կարելի է գալ այն եզրակացութեան, որ Վասիլ Աւանեսեանը իւր տասնամեայ երեսփոխանութեան պաշտօնը վարել է մաքուր, ազնիւ և ջերմեռանդ կերպով ի շահ իւր ս. Աստուածածին եկեղեցու, որին նա սիրում և պաշտում է իւր հոգւոյ ամբողջ էութեամբ։*

# ՀԱՇԻՒ

ԲԵԴՂԵՀԷՄԻ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՒՈՅ 1906 ԹՈՒԻ

ՓԵՏՐՈՒԱՐԻ 5-ԻՑ ՄԻՆՋԵՒ 1907 ԹՈՒԻ ՓԵՏՐ. 10-Ը

# ՀԱՇԻՒ

### ԲԵԴՂԵՀԷՄԻ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՒՈՅ 1906 ԹՈՒԻ ՓԵՏՐՈՒԱՐԻ 5-ԻՑ ՄԻՆՉԵՒ 1907 ԹՒԻ ՓԵՏՐՈՒԱՐԻ 10-Ը

| ՄՈՒՏՔ | Ռ. | Կ. |
| --- | --- | --- |
| Առ 5-ն Փետր. 1906 Թ. կանխիկ դրամ և ամբողջ մոմ . | 1948 | 92 |
| 1. Աւագ պահարանից գնուած ամբողջ մոմի վաճառումից 15 փութ 30 1/2 ֆունտ . . . . . | 1576 | 26 |
| Կրկնապատիկից աւելացած . . . . . | 48 | 61 |
| Լուսարարից ստացուած մոմ . . . . . | 8 | 38 |
| 2. Կիսայրեալ մոմի վաճառումից 7 փութ 10 ֆունտ . | 181 | 25 |
| 3. Լուսագին մկրտութեան, վարձ պսակի, թագերի, ջահերի, դիազարդի և դիասեղանի . . . . . | 56 | 75 |
| 4. Դրամաբացէքից և խաչհանէք . . . . . | 10 | — |
| 5. Ս. Աստուածածնայ տօնից եկեղեցու մասն . . | 17 | 78 |
| 6. Ուխտաւորներից «Տարլայ» արդիւնքից եկեղեցու մասն | 11 | 24 |
| 7. Գանձանակադրամ եկեղեցւոյ տփից . . . . | 31 | 49 |
| 8. Վերափոխման տօնին մրգավաճառից տեղի վարձ . | 10 | — |
| 9. Եկեղեցական տներից ստացուած վարձ . . . . . | 579 | — |
| 10. Տփխիսի Առևտրական բանկում գտնուած և 1904 թ. գրաւուած եկեղեցւոյ դրամից մնացած նոյն բանկում. | 11 | 82 |
| 11. Դրամի տոկոսը . . . . . . . . | 67 | 14 |
| Գումարն է . . . | 4558 | 64 |
| Գումարն է . . . | 4558 | 64 |

| ԵԼՔ | Ռ. | Կ. |
| --- | --- | --- |
| 1. Աւագ պահարանից գնուած ամբողջ մոմ 15 փ. 30 1/2 ֆ. | 788 | 13 |
| 2. Ռօճիկ դպրաց, ժամկոչաց և գիշերապահի . . | 715 | 10 |
| 3. Գործակալական ռօճիկ . . . . . . | 35 | — |
| 4. Զափաբերական մատեանների գին . . . . | 10 | — |
| 5. Զրկինեանց եկեղ. Սիմէօն ա. քահանային նպաստ . | 10 | — |
| 6. Վերափոխ. Ծննդ. և նոր տարւոյն սպասաւորաց և պատահ. տիրացուաց . . . . . . | 18 | 80 |
| 7. Ընկոյզի փայտից շինուած չորս հատ նոր շամատանների | 33 | — |
| 8. Եկեղ. դասերի երեք ապակեայ ջահերի նորոգութեան | 26 | 22 |
| 9. Եկեղ. գրեանց կազմի, արծաթեայ չորս շամատանների արծաթաջրելու և երկու շուրջառների կարկատանաց. | 19 | 25 |
| 10. Եկեղեցւոյ ներսի, դրսի և ուրիշ կարկատանաց . | 40 | 55 |
| 11. Տ. Դաւթեանի տան կից տան կտուրի ժեշտի, ջրի խողովակների և մեծ սանդխտի տակի ջրանցքի նորոգութեան . . . . . . . | 28 | — |
| 12. Զանգագատան առջևի քարէ սանդխտի նորոգութեան . | 15 | — |
| 13. Մուղնւոյ տուպիկում եղած տան յատակագիծը պատրաստող ճարտարապետ պ. Յովսէփ Գ. Գարեծեյեանին | 20 | — |
| 14. Այս տան քանդուած պատի հողը և այլ փողոցից վերցնելուն . . . . . . . | 17 | — |
| 15. Զուգունէ և ժեշտէ երկու վառարանների, գիշերապահի ոտնամանի և սրապահի եափնջի գին. | 29 | 10 |
| 16. Տների գնահատական տուրք՝ ի հաշիւ 1905 և 1906 ի | 41 | 52 |
| 17. Ս. Էջմ. կենդ. համագումարի, Յով. Ուսունի և երեցփոխանական գործի առթիւ եղած ժողովներին . | 36 | 12 |
| 18. Վերափոխման տօնի առթիւ . . . . . | 41 | 61 |
| 19. Տիրուհի այրի Տ. Դաւթեանցին նպաստ . . . | 8 | — |
| 20. Նոր ձևի չորս ֆանարներին և տների չորս համար. | 12 | 25 |
| 21. Երուսաղէմի փողոցում եղող տան կարկատանքին . | 9 | 15 |
| 22. Մանրածախք-նաւթ, ածուխ, փայտ, ալիւր, խունկ և այլն | 101 | 07 |
| Գումարն է . . . | 2054 | 87 |
| Առ 10-ն փետ. 1907 թ. կանխիկ դրամ և ամբողջ մոմ | 2503 | 77 |
| Գումարն է . . . | 4558 | 64 |

# Հ Ա Շ Ի Ւ

**ԲԵԴՂԷՀԷՄԻ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՒՈՅ** 1907 Թ. ՓԵՏՐ. 10-ԻՑ ՄԻՆՉԵՒ 1908 Թ. ՓԵՏՐ 10-Ը

| Մ Ո Ւ Տ Ք | Ռուբ. | Կ. |
|---|---|---|
| Առ 10-ն փետր. 1907 Թ. Տփխիսի Առեւտրական բանկում գտնւում է . . . . . . . . | .2048 | 61 |
| 1. Առ ձեռն դրամ . . . . . . . . . . | 237 | 49 |
| 2. Ամբողջ մոմ . . . . . . . . . . | 217 | 67 |
| 3. Աւագ պահարանից գնուած ամբողջ մոմի վաճառումից 9. փ. 33. ֆ. . . . . . . . . . | 983 | — |
| Կրկնապատկից աւելացած. . . . . . . | 36 | 27 |
| 4. Նախ. կապալ. պ. Շահլամեանից գնուած մոմ 3փ 20ֆ. | 360 | 88 |
| 5. Կիսայրեալ մոմի վաճառումից 5. փ. 18. ֆ. . . | 136 | 25 |
| 6. Լուսագին մկրտութեան, վարձ դիագարգի, դիասեղանի, ջահի և պսակի թագերի . . . . . . | 65 | 30 |
| 7. Դրնաբացէքից եկեղեցւոյ մասը . . . . . | 6 | 25 |
| 8. Ս. Աստուածածնայ ափից եկեղեցւոյ մասը . . . | 8 | 96 |
| 9. Գանձանակադրամ եկեղեցւոյ ափից և բաց գանձանակից | 29 | 83 |
| 10. Ուխտաւորներից (Տապլայ) արդիւնքից եկեղեցւոյ մասը | 8 | 75 |
| 11. Վերափոխման տօնի վարձ և մոմի թղթերի վաճառումից . . . . . . . . . . | 8 | — |
| 12. Եկեղեցական տներից ստացուած վարձ . . . | 530 | — |
| Գումարն է . . . | 4677 | 26 |
| Գումարն է . . . | 4677 | 26 |

| Ե Լ Ք | Ռուբ. | Կ. |
|---|---|---|
| Աւագ պահարանից գնուած ամբողջ մոմ 9 փութ 33 ֆ. | 491 | 25 |
| 2. Նախկին կապալ. պ. Շահլամեանից գնուած մոմ 3 փ. 20ֆ. | 100 | — |
| 3. Զափաբերական մատեանների գին . . . . | 10 | — |
| 4. Դպիր և ժամկոչ սպասաւորներին, Մողնոյ տուպիկի տան գանապանին և աղբ թափողին տարեկան ռոճիկ | 861 | 80 |
| 5. Փոքր երգիչ Յովհաննէս Կոյատօղեանին . . . | 10 | 40 |
| 6. Նպաստ այրի տիրուհի Ե. Տ. Դաւթեանցին. . . | 20 | 50 |
| 7. Երեցփոխ. 1906 թւի հաշուէտւութեան առթիւ . . | 23 | 40 |
| 8. Նոր կարած դիագարգի համար ծախսուած . . . | 35 | 15 |
| 9. Ննջեցեալի վերայ գործածելու նոր խաչվառի . . | 21 | 75 |
| 10. Նոր կարած ութ հատ մեծ և փոքր շապիկների . . | 20 | 33 |
| 11. Ս. զանի երկու ջահերի, հանգ. Յովն.-ի ընծայած երկու շամատաններ մաքրելուն, երկու շուրջառների կարկատ. և մի նոր տիպարի. . . . . . | 17 | 76 |
| 12. Մեծ և փոքր գաւիթների վերանորոգութեան . . | 98 | 1 |
| 13. Ուխտաւորների սենեակների կարկատ. և ներկելուն. | 49 | 68 |
| 14. Եկեղ. կտուրի ամբողջ ժեշտը ներկելուն, նոր ժօլօբ շինելուն և անձրեւաջրերի խողովակներ դեղագործելուն | 131 | 90 |
| 15. Տ. Դաւթեանի տան կից սենեակի և փասամէջի սենեակի կտուրի նորոգութեան և գնուած 500 աղիւսի գին. | 21 | 70 |
| 16. Վերափոխման տօնի առթիւ՝ լուսաւորութեան հսկող ոստիկանութեան, բանւորների և այլն . . . | 31 | 66 |
| 17. Զանազան ծախսեր՝—գիշերապահի մի խափնջի, եկեղ. վառարանի նոր խողովակներ շինելուն և այլն . | 28 | 22 |
| 18. Մանրածախք - նաւթ ածուխ, փայտ ալ. խունկ և այլն | 133 | 42 |
| 19. Նոր տարւոյ առթիւ տիրացուաց և ժամկոչներին . | 9 | — |
| Գումարն է . . | 2115 | 93 |
| Առ 10-ն փետ. 1908 Թ. Տփխիսի Առեւտրական բանկում ընթացիկ հաշւով տոկոսով միատեղ գտնւում է . . | 2095 | 96 |
| Առձեռն դրամ. . . . . . . . . . | 247 | 70 |
| Ամբողջ մոմ . . . . . . . . . . | 217 | 67 |
| Գումարն է . . | 4677 | 26 |

## Վերաստուգող մասնաժողովի զեկուցումը Բեթղեհէմի ս. Աստուածածնայ եկեղեցու ծխական ժողովին։

Վերաստուգող մասնաժողովը չորս նիստերում, ներկայութեամբ պ. պ. Աբգար Օրբելու, Արշակ Տէր-Յովհաննիսեանի, Գրիգոր Նարիմանեանի և Գրիգոր Վանցեանի քննելով Աստուածածնայ ս. Բեթղեհէմի եկեղեցու երեցփոխ Վասիլ Ալանեանի ներկայացրած հաշիւները 1905—1906 և 1906—1907 թ. փետրուար ամիսը, գտանք բոլոր հաշիւները ստոյգ և համապատասխան փաստաթղթերին։

Հաշիւները քննելուց երևաց, որ երեցփոխանութեան առաջին տարին 1904—1905 թ. համար պարոն Ալանեանը զուտ արդիւնք տուել է 143 ր. 76 կ., երկրորդ տարուայ 1905—1906 թ. արդիւնքն եղել է 59 ր. 36 կ. իսկ երրորդ տարին 1906—1907 թ. եղել է արդիւնք 309 ր. 77 կ։ Ընդամենը, երեք տարուայ ընթացքում արդիւնք է եղել զուտ 859 ր. 77 կ։

Առ 10-ն փետրուարի 1907 թ. երեցփոխ պարոն Ալանեանի մօտ մնում է կանխիկ դրամով և ամբողջ մօտ 2503 ր. 77 կ. որից 1148 ր. 61 կ. գտնւում է բանկում, իսկ մնացեալ 1355 ր. 16 կ. մնում է նրա մօտ։ Վերաստուգող մասնաժողովը հարկաւոր է համարում առաջարկելու պարոն Ալանեանին, որ այդ գումարն էլ նա յանձնէ որևէ բանկային հիմնարկութեան, թողնելով իր մօտ, ընթացիկ ծախսերի համար մի փոքրիկ գումար։

Թիֆլիզ 1907 թ. Մարտի 23.

Անդամներ վերաստուգող մասնաժողովի՝
Գր. Վանցեան
Ա. Օրբելի
Գրիգոր Նարիմանեան

Վերաստուգող մասնաժողովի անդամները յայտնում են ծխական ժողովին, որ չորրորդ անդամը Արշակ Տէր-Յովհաննիսեան վերաստուգող մասնաժողովի ներկայ է եղել նիստերին, որոնք թւով եղել են երեք, իսկ չորրորդին նա Արշակ Տէր-Յովհաննիսեանը ներկայ չի եղել, ըստ այնմ և չէ ստորագրել։

Նախագահ ծխական ժողովի՝ բժիշկ Բ. Նաւասարդեան

Քարտուղար Երւանդ Դեւոյեանց

1907 թ. 27 մայիսի



## Վերաստուգող Մասնաժողովի զեկուցումը

Թիֆլիզի Բեդղեհէմի ս. Աստուածածնայ եկեղեցու ծխակ. ժողովին վասն 1907 և 1908 թ.թ.

Վերաստուգող Մասնաժողովը աչքի անցնելով պ. երեցփոխան Բ. Ռ. Ալանեանի հաշուեմատեանները՝ ի մօտոյ ծանօթանալով եկեղեցու ունեցած անշարժ կալուածների դրութեան հետ, այն եզրակացութեանն է գալիս, որ՝ — ա) Կալուածները կառավարուել են բաւական անխնամ կերպով, նոյն իսկ մի կալուածի շինութեան մասերն՝ օրինակ՝ դռները, պատուհանները, գերանները տարել են անյայտ մարդիկ, մինչդեռ պ. երեցփոխանի ձեռքին միշտ եղել է կարևոր առձեռն դրամը դրա առաջն առնելու և շինութիւնը ժամանակին կարկատելով՝ ազատելու քայքայուելուց։

բ. Եկեղեցու դրամական գործավարութիւնը ընդհանուր առմամբ կատարուած է գրեթէ՝ հակ·ռակ «Հրահանգի» (ի պէտս վերատեսչի բարեկարգութեան եկեղեցեաց Տփխիսի և երեցփոխանաց թեմի նորին-հրատ. 1884 թ.) բոլոր յօդուածների թերի և անխնամ կերպով։ Բաւական է յիշել, որ պ. երեցփոխը իւր ձեռքով չէ մուծած ել ու մուտքի հաշուի ոչ մի յօդուած, այլ հաշիւները ժամանակին մատեանում գրել է եկեղեցու սպասաւոր պ. Արսէն Տ-Սարգսեանը տարուայ վերջը կամ մի քանի ամիս անցնելուց յետոյ. մինչդեռ յայտնի է, որ այդ տեսակ պատրաստած հաշիւը արուեստական է և չէ կարող ճիշտ պատկերացնել եկեղեցու ել ու մուտքի դրութիւնը։ Այս իրողութիւնը կը խոստովանի թէ ինքը պ երեցփոխը և թէ հաշիւներ գրող յիշեալ Ա. Տ. Սարգսեանը։ Ուստի շատ պարզ է այդպիսով կազմած հաշիւների արժէքը և թէ ո՞ր աղբիւրից պէտք տեղեկանան հաշուետեսները գործի ճիշտ դրութեանը։

Հաշիւների դրութեան բանաւոր մանրամասն բացատրութիւնը, եթէ կը ցանկան լսել յարգելի ծխականները. կը տան Մասնաժողովի պ. պ. անդամներ՝ Ս. Հազարապետեանը և Յ. Աղասեանը, և Մասնաժողովս հրաւիրելով յարգելի ծխականների և պ. երեցփոխի ուշադրութիւնը այս անբնական երևոյթի վրայ լիայոյս է, որ միջոցներ կառնուեն գոնէ այսուհետև դրա առաջն առնելու։

1910 թ. Սեպտեմբերի 26. Թիֆլիզ։

Անդամք Մասնաժողովի
Յովհաննէս Ունանեան
Սարգիս Հազարապետեան
Յովհաննէս Աղասեան
Գրիգոր Շահբուդաղեան

ՆՈՐԻՆ ԲԱՐՁՐ ԱՐԺԱՆԱՊԱՏԻՒԹԵԱՆ ԳՈՐԾԱԿԱԼԻ ԵԿԵՂԵՑԵԱՑ ԱՌԱՋԻՆ ՄԱՍԻ ՏՓԽԻՍԻ ՍԱՐԳԻՍ ԱՒԱԳ ՔԱՀԱՆԱՅ ՇԻՈՅԵԱՆԻՆ

Բեթղեհէմի սուրբ Աստուածածնի եկեղեցու հաշուետուներից

# ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

*Ի հետեւումն առաջադրութեան Ձերդ բարձր արժանապատուութեան ի 27 նոյեմբերի սոյն ամի ընդ № 743, պատիւ ունինք ներկայացնել ընդ սմին 1) 1907 և 1908 թուականների հաշուեմատեանները իրանց ապացուցիչ փաստաթղթերով, 1907 թուի 94 հատ և 1908 թուի 67 հատ, 2) շարժական և անշարժ գոյքից մատեանը՝ որոնց նախկին երեսփոխանից ստանալու մասին, ներկայ երեսփոխանը պ. Աւանեանը չէ ստորագրած մատեանում, 3) առանձին թերթի վրայ մատիտով գրած մի ցուցակ տասնհինգ կտոր եկեղեցու ընծայած արծաթեայ և ոսկեղէն իրեղէնների, որոնք չեն մուծուած վերոյիշեալ մատեանում և 4) վերստուգող մասնաժողովի զեկուցումը 1907 և 1908 թուի հաշուեմատեանների մասին։*

Կոլլեժսկի սովետնիկ Սարգիս Հազարապետեան
Յովհաննէս Ունանեան
Յովհաննէս Աղասեան

16 *դեկտեմբերի* 1913 *թ.*
*Տփխիս.*



*Այս գրութիւններից նախ պարզւում է, որ պ. պ. հաշուետեսները 1907 – 8 թ. հաշուեմատեանները քննելով, ամուր պահում են իրենց մօտ և ներկայացնում միմիայն 1913 թուի վերջը և այն էլ գործակալի բուռն պահանջներից յետոյ։ Մինչդեռ եկեղեցու շահերին նախանձախնդիր անձինք, եթէ նկատում էին մի որևէ թերութիւն, որը կարող էր վնաս բերել եկեղեցուն, անմիջապէս պէտքէ զեկուցանէին ծխական ժողովին այդ քայքայման առաջն առնելու։ Նամանաւանդ որ դռները, պատուհանները և այլն տարել են ոչ ներկայ երեսփոխի ժամանակ այլ նախկին։ Սակայն ստորև դնենք և յետագայ փաստաթղթերը և ապա մի առ մի, կէտ առ կէտ պատասխանենք նրանց, եթէ կարելի է այսպէս ասել, մեղադրանքներին։*

# ՀԱՇԻՒ

Բեդղեհէմի ս. Աստուածածնի եկեղեցապատկան I-ին և II-րդ Մուղնու նրբափողոցներում (տուպիկներում) գտնուած գետնի վրայ կառուցուած բնակարանի, որ սկսուեց 1909 թուի յունիս ամսին։

| Պայման. | № | | Ռ. | Կ. | Ռ. | Կ. |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | 1 | Պայմանագրի համաձայն տան շինութեան կապալառու Մովսէս Ղարիբեանցին վճարուեց չորս հազար երեք հարիւր քառասուն և հինգ րուբլի. . | 4345 | — | | |
| 2 | 2 | Տան կտուրի ֆասադի կողմից ցինկի գործին վճարուեց մի հարիւր յիսուն և մէկ րուբլի և քսան ու վեց կոպ.։ (5 փաստաթուղթ) . . . . . | 151 | 26 | | |
| 3 | 3 | Տան վերին յարկում մի վաննա շինելուն վճարուեց մի հարիւր երեսուն և մէկ րուբլի երեսուն կոպ. (2 փաստաթուղթ) . . . . . | 131 | 30 | | |
| 4 | 4 | Տան շինութեան պրօէկտ կազմելուն և վերահսկելու համար ճարտարապետներին վճարուեց երեք հարիւր քառասուն րուբ. (8 փաստաթուղթ) . | 340 | - | | |
| 5 | 5 | Տան շինութեան համար ընդհանուր ջրմուղից ջրի խողովակներ անցկացնելու համար, քաղաքային վարչութեան վճարուեցան երկու հարիւր երեսուն րուբլի քառասուն եօթ կոպ. (2 փաստաթուղթ) . . . | 230 | 47 | | |
| 6 | 6 | Բնակարանի բոլոր սենեակների համար գնուեց արոյ (պաստառ) և վճարուեց մի հարիւր երկու րուբլի տասն և հինգ կոպ. (5 փաստաթուղթ) . . | 102 | 15 | | |
| 7 | 7 | Ֆասադի սրուածքը ալիբաստրով, վճարուեց եօթանասուն և հինգ րուբ. (1 փաստաթուղթ) . . . . | 75 | — | 5375 | 18 |



| Պայման. | № | | Ռուբ. | Կ. | Ռուբ. | Կ. |
|---|---|---|---|---|---|---|
| 8 | 8 | Տան բակի կողմից շինուեցաւ երկաթեայ սանդուխտ. երկաթեայ դուռն, երկաթեայ բէչօտկաներ և ֆասադի կողմից երկաթեայ բալկոն. վճարուեց երկու հարիւր երեսուն և երկու րուբլի և եօթանասուն ու հինգ կոպ. (3 փաստաթուղթ) . . . . . . | 232 | 75 | | |
| 9 | 9 | Ներքևի յարկի սենեակի պատերը խոնաւութիւնից ազատելուն համար, պատերը սրուեցան ասֆալտով, շինուեցաւ ֆասադի կողմից տրոտուարը և բակը, որին վճարուեց մի հարիւր քառասուն և եօթ րուբ. վաթսուն կոպ. (4 փաստաթուղթ) . . . | 147 | 60 | | |
| 10 | 10 | Ելեկտրական զանգակներին վճարուեց քսան և չորս րուբլի (1 փաստ.) | 24 | — | | |
| 11 | 11 | Տունը խոնաւութիւնից ազատելու համար փորուեցաւ պատվալ վճարուեց ութսուն րուբլի (1 փաստաթուղթ) . | 80 | — | | |
| 12 | 12 | Ֆասադի կողմի դրէնաժ շինելու ծախք մի հարիւր րուբլի (1 փաստաթ.) | 100 | — | | |
| 13 | 13 | Բակում մի արտաքնոց շինելու և պառքաշին վճարուեց տասն և երկու րուբլի (1 փաստաթուղթ) . . | 12 | - | | |
| 14 | 14 | Ցիտուն պողոսկայ հող դէն ածելուն վճարուեց տասն և չորս րուբլի (1 փաստաթուղթ) . . . . | 14 | — | | |
| 15 | 15 | Զանազան մանր ծախք երեսուն և ինն րուբլի քառասուն և վեց կոպ. (14 փաստաթուղթ) . . . . . | 39 | 46 | | |
| 16 | 16 | Կապալառուից տունը ստանալուց յետոյ նորից պոլերը, դռները և պատուհանները ներկուեցան և վճարուեց վաթսուն և մէկ րուբլի յիսուն ու երեք կոպ. (1 փաստաթուղթ) . . . | 61 | 53 | | |

40592-67
ZOUR-Арм.ССР
им. А. Мясникяна

| Գոյ. մատ. | № | | Ռուբ. | Կ. | Ռուբ. | Կ. |
|---|---|---|---|---|---|---|
| 17 | 17 | Կապալառու Մովսէս Ղարիբեանից գնեցի 3720 հատ հին կղմինտր և տարայ եկեղեցու բակը, որի համար ծախսեցի վաթսուն րուբլի քսան կոպ. (1 փաստաթուղթ) . . . . . . | 60 | 20 | | |
| | | Շինութեան ծախուց ընդհանուր գումարն է վեց հազար մի հարիւր քառասուն ու վեց րուբլի եօթանասուն և երկու կոպ.։ | 6147 | 02 | | |

Վերոյիշեալ ծախսերն վճարել եմ ըստ պատկանելուն երեցփոխան Բեդղեհէմի ս. Աստուածածին եկեղեցու՝

ՎԱՍԻԼ ԱՒԱՆԵԱՆ

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ

## ԿԱԶՄԱԾ 10-Ն ՓԵՏՐՒԱՐԻ 1914 ԱՄԻ Ի Ք. ՏՓԽԻՍ

Բեթղեհէմի ս. Աստուածածին եկեղեցու հաշիւները 1907 և 1908 թուականներինը յանձնուած էին հաշուետեսներին 1909 թուականից քննութեան. հաշուետեսներն էին պ. պ. Յովհաննէս Ունանեանց, Սարգիս Հայրապետեանց, Յովհաննէս Աղասեանց և Գրիգոր Տանքուզաղեանց։ Նոքա հաշիւները պահում են ամբողջ հինգ տարի և չնայած իմ բազմաթիւ դիմումներին, չէին յանձնում. և վերջապէս 1913 թ. դեկտեմբերի 31ի-ն ինձ յաջողւեց ստանալ նրանցից 1907 և 1908 թ. հաշւեմատեանները։ Սոյն հաշիւների ստուգութիւնը ձգձգելու և վերոյիշեալ հաշւեմատեանները ձեռքին չունենալու պատճառով երեցփոխան պ. Բարսեղ Աւանեանի հետեւեալ տարիների հաշիւները մինչև այսօր մնացել են առանց վերջնական քննութեան և ստուգութեան։ Ստանալով պ. պ. հաշւետեսներից 1907 և 1908 թ. հաշւեմատեանները և արձանագրութիւնը՝ ես անմիջապէս պահանջեցի պ. Աւանեանից 1909, 1910, 1911. 1912 և 1913 թ. հաշւեմատեանները, թէպէտ գործակալութեանս ժամանակւայ վերջին երեք տարւայ հաշիւները իւրաքանչիւր տարին ստուգել եմ։ Թէ նախկին ստուգութիւնից և թէ այժմեանից երևաց, որ մատեանները մնացորդով չի փակել. 1) 1909 թ. սկզբում փոխանցելով 1908 թ. մնացորդ առևտրական դրամատան գումարը մուծել է 50 կոպէկ պակաս։ 2) Հաշիւը պահուած է ոչ թէ յունվարից, այլ փետրվար ամսից։ 3) Մոմի և այլ ծախքերի հաշիւները քննեցի և գտայ ճիշտ։ 4) Սոյն ժամանակամիջոցին կատարուել է նոր տան շինութիւնը, որի հաշիւները դեռ ևս չունի մուծած հաշուի մատեանում, թէև ծախքերի մանրամասն հաշիւը ներկայացրել է առանձին ցուցակով։ 5) Հաշուեմատեանի մէջ չէ մուծուած Գէորգ ա. քահ. Մեհրաբեանցի շինութեան համար տուած 2600 ռ. կանխավճարը տան վարձի մէջ։ 6) Եկեղեցւոյ կալւածոց ապառիկները չէ ցոյց տուած տարուայ վերջը։ 7) Ստուգելով մուտքերը և ծախքերը երևաց հետևեալը՝ 1909 թուի դեկտեմբեր ամսոյ վերջին մուտքը անցեալ տարուայ մնացորդով 5078 ռ. 86 կ., նոյն թուականի ծախք երևաց 1928 ռ. 2 կ., ծախքը հանելով մնում է պարտատի դրամ 3150 ռ. 84 կ.։

8) Սոյն 3150 ռ. 84 կ. աւելացնել Գէորգ ա. քահ. Մեհրաբեանից ստացուած կանխավճարը 2600 ռ. երկուսը միասին կանի 5750 ռ. 84 կ.։

9) Տան շինութեան ամբողջ ծախս եղել է 6147 ռ. 2 կ. սրանից դուրս գալ 5750 ռ. 84 կ. մնում է պարտք 396 ռ. 18 կ.։

10) **1910** թ. մուտք եղել է 2166 ռ. 95 կ., սոյն թուականի ծախք եղել է 1552 ռ. 92 կ., սոյն թուի մուտքից ծախքը հանելով մնում է պատրաստի դրամ **1911** թուի յունվարի 1-ից 614 ռ. 3 կ. սոյն գումարից հանել շինութեան վրայ ծախսուած պակասորդ 396 ռ. 18 կ., ուրեմն մնում է յունվարի 1-ից **1911** ամի 217 ռ. 85 կ.։

11) **1911** թ. մուտք երևաց 2471 ռ. 47 կ., սոյն թուի ծախք 1765 ռ. 25 կ., ծախքը հանելով մուտքից մնում է **1912** թուի յունվարի 1-ից փոխանցումն գրելու 706 ռ. 22 կ.։

12) **1912** թ. մուտք 2231 ռ. 18 կ., ծախք սոյն թուի 1903 ռ. 81 կ., ծախքը մուտքից հանած մնում է փոխանցումն գրելու **1913** թուականի յունվարի 1-ից 327 ռ. 37 կ.։

13) **1913** թ. մուտք 2390 ռ. 6 կ., ծախք սոյն թուականի 1762 ռ. 52 կ., ծախքը մուից հանելով մնում է 627 ռ. 54 կ. սրանից դուրս գալ ծախս սոյն թուականի դպրոցի 608 ռ. 56 կ., որ մուծուած չէ եկեղեցու հաշուի մատեանում մնում է գրելու փոխանցումն **1914** թուի յունվարի 1-ից 18 ռ. 98 կ.։

### Մնացորդ գումարներ

| | | |
|---|---|---|
| **1910** թուականից | 217 ռ. | 85 կ. |
| **1911** թուականից | 706 ռ. | 22 կ. |
| **1912** թուականից | 327 ռ. | 37 կ. |
| **1913** թուականից | 18 ռ. | 98 կ. |

Ընդամենն է 1270 ռ. 42 կ.

Ուրեմն յունվարի 1-ից **1914** թուի մնում է պատրաստի դրամ 1270 ռ. 42 կ. սոյն գումարին աւելացնել % ընթացիկ հաշուի 72 րուբլի, որ չի մուծուած մատեանում. սոյն գումարը մնացորդների հետ միասին ընդամենն է մի հազար երեք հարիւր քառասուն երեք րուբլի քառասուն երկու կոպէկ (1343 ռ. 42 կոպէկ)։ Սոյն գումարից 1000 ռուբլի տրուած է մի տարի ժամանակով եկեղեցու անունով վաճառականական դրամատանը № **43** տոմսով, իսկ մնացած երեք հարիւր քառասուն երեք րուբլի քառասուն երկու կոպ. (343 ռ. 42 կ.) գտնւում է երեցփոխան պ. Բարսեղ Աւանեանցի մօտ։



Սոյն երեսի արձանագրութիւնը ամբողջը պէտք է գրուի **1914** թուի հաշուեմատեանի սկզբից իբրև փոխանցումն և մնացորդ նախկին տարիների։ Նոյնպէս երեցփոխանը և շինարարական մասի հոգաբարձութիւնը պարտաւոր են ներկայացնել մանրամասն հաշիւ կազմած և վաւերացրած ճարտարապետ Խրիստափոր Տէր-Սարգսեանից և այդ հաշիւը ստուգելուց և ընդունելուց յետոյ՝ շինութեան հաշիւները արձանագրել հաշուեմատեանի մէջ։

Արձանագրեցի Տփխիսոյ Հայոց եկեղեցիների ա. մասի

Գործակալ՝ Սարգիս ա. քահ. Շիոյեանց

ԾԱՆՕԹ. 1913 թուականի հաշուեմատեանում դեկտեմբերի վերջին գրուած է մուտք 64 ռ. 90 կոպ, և ծախք 10 ռ. և այս հաշիւը գրուեց հաշիւները ստուգելուց յետոյ։ 1913 թուականի հաշիւը ստուգելու ժամանակ պէտք է աւելացնել այն գումարները։

Գործ. Ս. ա. քահ. ՇԻՈՅԵԱՆՑ

Այս գրութիւնը ստուգեց Գ. ՏԷՐ-ՍՏԵՓԱՆԵԱՆՑ

## ԲԱՐՁՐ ԱՐԺԱՆԱՊԱՏԻՒ ՀԱՅՐ ՇԻՈՅԵԱՆՑԻՆ!

Բեթղեհէմի եկ. ծխ. դպրոցի Հոգաբարձութիւնս պարտք է համարում յայտնելու Ձեզ, որ հին հաշիւների քննութիւնը կապուած լինելով մի շարք ապացուցող ակտերի հետ, որի ստուգելը Հոգաբարձութեան համար հանդիսանում է միանգամայն անհնարին, ուստի վերջինս բաւականանում է գործակալ հայր Շիոյեանի կատարած քննութեամբ։

Ինչ վերաբերում է եկեղեցապատկան նոր կառուցած Աբաս-Աբադսկի հրապարակի մօտ գտնուող շինութեան վերաբերեալ ծախսուած 6147 ռ. 2 կ. հաշւին, Հոգաբարձութիւնս կայացրել է հետեւեալ որոշումը՝ առաջարկել պ. Աւանեանին ներկայացնել ճարտարապետ Խրիստափոր Տէր-Սարգսեանի կազմած և վաւերացրած հաշիւը, որի վերաբերմամբ Հոգաբարձութիւնը կըտայ իր եզրակացութիւնը։

Այս գրութեան հետ ուղարկում ենք նաև բոլոր հին մատեանները. 1907, 1908, 1909, 1910 1911, 1912 և 1913 թւականների, նոյնպէս ցուցակ շարժական և անշարժ գոյքերի և այլ գրութիւններ հաշիւների հետ կապ ունեցող։

Նախ. Հոգաբ. Գար. Տէր-Ստեփանեան

Հոգաբարձու. Քարտուղար՝ Ար. Յովհաննիսեան

Թիֆլիս, 1914 թ. 22 մարտի։

Христафоръ Богдановичъ Теръ-Саркисовъ
Художникъ-архитекторъ.

Christophor Ter-Sarkissoff
artiste-architecte.

**1914 г. сентября 16-го числа.**

10 числа сего мѣсяца представлены мнѣ Ктиторомъ Петхаинской Св. Богородицы церкви, Василіемъ Аваньянцемъ, всѣ счета расходовъ, по постройкѣ дома Петхаинской церкви, находящагося въ V полицейскомъ участкѣ города Тифлиса, на 1-мъ и 2-мъ Могнинскихъ Тупикахъ.

Домъ церковный и документы по постройкѣ его (расходовъ) по предложенію попечительства Петхаинской церкви и по предложенію Армяно-Григоріанскаго Епархіальнаго Начальника Грузино-Имеретинской Епархіи Епископа Ефрема мною были детально разсмотрѣны 1910 году—въ то же время были мною составлены два акта, каковые были подписаны мною и утверждены Епископомъ Ефремомъ и вручены были мною Попечительству церкви.

Въ этихъ актахъ были указаны, что зданіе выстроено конструктивно и прочно въ техническомъ отношеніи, и что всѣ произведенные расходы документально произведены правильно.

Нынѣ—въ виду того, что утеряны эти акты Попечительствомъ, Ктиторомъ были представлены мнѣ всѣ документы расходовъ по постройкѣ вышеназваннаго дома и по новой провѣркѣ всѣхъ счетовъ—мною найдены всѣ счета правильными и сумма общая расходовъ (т. е. стоимость дома) вылилась въ сумму шесть тысячъ триста патнадцать рублей, (6315 р. 47 к.).

Архитекторъ *Христофоръ Теръ-Саркисянцъ*

P. S. Домъ—въ настоящемъ его видѣ стоитъ гораздо болѣе истраченнаго капитала.

Архит. *Христофоръ Теръ-Саркисянцъ.*

## Начальнику Грузино-Имеретинской Армяно-Григоріанской епархіи.

Представляя при семъ постановленіе ревизіонной комиссіи по ревизіи дѣлъ ктитора Бетхаинской во имя Св. Богородицы церкви Аванянца, довожу до свѣдѣнія Вашего Пресвятѣйшества, что съ настоящимъ постановленіемъ я несогласенъ на слѣдующемъ основаніи.

Для ревизіи произведенныхъ расходовъ по сооруженію новаго церковнаго зданія я какъ специалистъ три раза письменно потребовалъ отъ ктитора Аваняна черезъ предсѣдателя комиссіи священника Абулянца препроводить въ комиссію самыхъ нужныхъ документовъ, но въ результатѣ ничего я не добился. Ктиторомъ Аваняномъ въ началѣ ревизіи былъ представленъ только лишь договоръ съ подрядчикомъ, взявшимъ работу по постройкѣ зданія съ подшитою смѣтою на сумму 5743 р. 56 к. и то безъ чертежа и одинъ счетъ на сумму 6315 р. 47 к. о произведенныхъ кт. Аваняномъ расходовъ по этой постройкѣ, который почему-то подписанъ завѣдывавшимъ работами Инженеромъ Теръ-Саркисянцемъ.

Дѣло въ томъ, что произведенный по вышеупомянутому счету расходъ на сумму 6315 р. 47 коп. не соотвѣтствуетъ въ дѣйствительности договору, заключенному съ подрядчикомъ Мовсесомъ Гарибянцемъ, ибо работы съ матеріалами исчислены по смѣтѣ на сумму 5743 р. 56 к. и сданы съ подряда оптомъ подрядчику Гарибову за сумму 3599 руб. Стало быть перерасходовано 2716 р. 47 к. Затѣмъ есть расходы, которые показаны и въ смѣтѣ и въ счетѣ, т. е. два раза. Вслѣдствіе чего для выясненія истины я нашелъ нужнымъ потребовать отъ ктитора Аванянца представить въ распоряженіе ревизіонной комиссіи нижеслѣдующіе документы, а именно:

1) Чертежъ къ смѣтѣ, т. е. планъ постройки,
2) Указъ консисторіи отъ 5 іюля 1909 г. за № 2340.
3) Постановленіе о томъ, чѣмъ было вызвано отступленіе отъ утвержденнаго плана и договора съ подрядчикомъ Гарибовымъ, взявшимъ постройку зданія за сумму 3595 руб. Затѣмъ



въ силу какихъ соображеній переиначенъ первоначальный проектъ зданія и увеличенъ расходъ до 6315 руб. 47 коп. и кѣмъ былъ этотъ перерасходъ разрѣшенъ.
4) Всѣ наряды, данные завѣдовавшимъ работами архитекторомъ.
5) На основаніи пункта 14 договора при измѣненіи первоначальнаго проекта должно быть составлено письменное соглашеніе съ подрядчикомъ согласно новаго проекта, а гдѣ это соглашеніе.
6) Акты о пріемѣ новаго зданія въ пользу общества и объ свидѣтельствованіи работъ.
7) Указъ консисторіи, разрѣшавшій перерасходъ и измѣненіе первоначальнаго плана постройки.
8) Договоръ объ отдачѣ новаго зданія въ аренду священнику Мерабову и
9) Свѣдѣнія объ образованіи суммы на постройку вышесказаннаго зданія. Такъ что безъ этихъ документовъ положительно не представлялось возможности произвести ревизію. Тѣмъ болѣе, что въ счетѣ о расходахъ на сумму 6315 р. 47 к. значатся работы, которыя показаны и въ смѣтѣ, т. е. два раза. Кромѣ того я вначалѣ ревизіи просилъ комиссію во главѣ съ предсѣдателемъ свящ. Абулянцемъ лично осмотрѣть постройку въ натурѣ и сличить ее со смѣтою. Но къ сожалѣнію никто изъ членовъ комиссіи не согласился. Но священникъ Абулянцъ совершенно былъ противъ осмотра и сличенія со смѣтою. Даже приводилъ доводы о томъ, что якобы въ компетенцію ревизіонной комиссіи не входилъ осмотръ дома въ натурѣ. Такъ что по мнѣнію священника Абулянца ревизіонная комиссія уполномочена только лишь бумаги осмотрѣть и провѣрить, ни съ чѣмъ не сличивъ ихъ.

Вѣдь можно ли допустить случай, не видѣвши зданія провѣрить его расходы. Можетъ на самомъ дѣлѣ зданія и нѣтъ. Священникъ Абулянцъ настолько увлекся своимъ пристрастіемъ на сторону ктитора Аванянца, что забылъ о томъ, что въ распоряженіи ревизіонной комиссіи даже не имѣются бумаги, которыя подтвердили бы пріемъ зданія и существованіе его. Даже наличность этихъ документовъ не въ силахъ была ограничить право ревизіонной комиссіи по осмотру зданія въ натурѣ. Такъ какъ она какъ послѣдняя инстанція, отвѣтствуетъ предъ обществомъ за все дѣло. Но мнѣ кажется, что всѣ бумаги и документы по нынѣ сохранились у ктитора, но

онъ умышленно не представляетъ въ комиссію, дабы этимъ лишить комиссію возможности провѣрить расходы. Попутно тому и поведеніе священника Абулянца по неволѣ наводитъ на мысль, что дѣло неправильное и недобросовѣстное, разъ не позволяютъ осмотрѣть зданіе и близко подойти къ нему. Грѣшно въ данномъ случаѣ умолчать; священникъ Абулянцъ при ревизіи дѣлъ Попечительства Петхаинской церковно-приходской школы крайне страстно относился къ дѣянію Гарегина Степанянца и старательно домогался обвиненія его, а въ настоящей ревизіи онъ проявляетъ обратную реакцію характера по отношенію къ ктитору Аванянцу и всячески старался повлять на комиссію въ пользу Аванянца.

Исходя изъ вышеизложеннаго во имя справедливости для блага общества, я нашелъ нужнымъ довести до свѣдѣнія Вашего Преосвятѣйшества и просить Васъ разрѣшить комиссіи лично произвести въ натурѣ осмотръ постройки и сличить ее со смѣтою съ цѣлью повѣрки произведенныхъ работъ и приказать ктитору Аванянцу для иллюстраціи дѣла поставить въ распоряженіе комиссіи приведенныхъ выше документовъ, хотя по существу настоящее дѣло подлежитъ направить прокурорскому надзору

Приложеніе: постановленіе комиссіи.

Членъ Ревизіонной комиссіи

Оставной Инженеръ Полковникъ *Мутафовъ*

Декабря 19 дня 1914 года

Гор. Тифлисъ, Николаевская ул. д. № 7.

# Հ Ա Յ Ի Ւ

# ՀԱՇԻՒ

## Բեթղեհէմի ս. Աստուածածին եկեղեցու 1909 թւի

### ՄՈՒՏՔ

| | | | |
|---|---|---|---|
| | Առ 1-ն փետրվարի 1909 թ. Տփխիսի առևտրական դրամատանը մնում էր կանխիկ դրամ | 2155 | 19 |
| | Առձեռն ընթացիկ ծախսերի համար . . | 420 | 46 |
| | Ամբողջ մոմով . . . . | 269 | 72 |
| | Ընդամենը . | 2845 | 37 |
| | 1909 թ. ընթացքում մուտք գոյացել է՝ | | |
| 1 | Աւագ պահարանից գնուած ամբողջ մոմի վաճառումից . . . . | 1327 | 42 |
| 2 | Կիսայրեալ մոմի վաճառումից . . | 145 | — |
| 3 | Լուսագին մկրտութեան, վարձ դիագարդի, ջահերի, մոմակալների, գիսեղանի և պսակի թագերի . . . . . | 62 | 40 |
| 4 | Գանձանակադրամ եկեղեցու տուփից և բաց գանձանակից . . . | 40 | 27 |
| 5 | Դռնբացէք . . . . | 8 | — |
| 6 | Տաբլայի արդիւնք . . . | 5 | 90 |
| 7 | Տօնի օրը տեղի վարձ մրգավաճառից . . | 7 | — |
| 8 | Եկեղեցական կալուածներից վարձագին . | 637 | — |
| | Ընդամենը . | 2232 | 99 |
| | ԳՈՒՄԱՐՆ Է . | 5078 | 36 |

### ԵԼՔ

| | | | |
|---|---|---|---|
| 1 | Աւագ պահարանից գնուած է մոմ . . | 638 | 13 |
| 2 | Վճարուած է ռոճիկ դպիրներին և ժամկոչին . | 735 | — |
| 3 | Մոդնւայ տուպիկի տան աղբ թափողին և դրունապանին . . . . . | 44 | 40 |
| 4 | Նպաստ և թաղման այրի տիրուհի Տէր-Դաւթեանին և Տիգրան Տէր-Դաւթեանին . | 128 | — |
| 5 | Զափաբերական մատեանների . . | 10 | — |
| 6 | Զանազան մանր ծախք՝ նաւթ, ածուխ, լուցկի և այլն . . . . | 80 | 45 |
| 7 | Ծխականներին հրաւիրելու հրաւէրներ տպագրելու, ցրելու և լրագրներին յայտարարելու վճարուած է . . . . | 30 | 73 |
| 8 | Պետական տուրք եկեղ. կալուածների . | 30 | — |
| 9 | Եկեղեցական կալուածների նորոգութեան . | 110 | 02 |
| 10 | Նորին Վեհափառութեան կեցութեան և գալստեան համար եկեղեցու վրայ մասնաւորած ծախս . . . . . | 75 | — |
| 11 | Դատարանական ծախս . . . . | 14 | 50 |
| 15 | Տօնի օրը այլ և այլ ծախս լուսաւորութեան, մշակների, տախտակամածի և այլն . | 26 | 29 |
| 13 | Նոր տարուայ նպաստ դպիրներին և ժամկոչներին . . . . . | 5 | 50 |
| | Ընդամենը . | 1928 | 02 |
| | Առ 1 Յուն. 1910 թ. մնում է դրամով և մոմով | 3150 | 34 |
| | ԳՈՒՄԱՐՆ Է . | 5078 | 36 |

# ՀԱՇԻՒ

## Բեդղեհէմի ս. Աստուածածին եկեղեցու 1910 թւի

### ՄՈՒՏՔ

| | | | |
|---|---|---|---|
| | Առ 1-ն Յունվարի 1910 թ. մնում էր պատրաստի դրամով և մոմով . . . | 3150 | 34 |
| | 1910 թ. ընթացքում ստացուել է մուտք | | |
| 1 | Աւագ պահարանից գնուած ամբողջ մոմից . | 1247 | 64 |
| 2 | Եկեղեցական կալուածներից վարձագին . | 658 | — |
| 3 | Լուսագին մկրտութեան, վարձ դիագարդի, թագերի, ջահերի, դիասեղանի . . | 65 | 80 |
| 4 | Բաց գանձանակից . . . . | 11 | 65 |
| 5 | Ս. Աստուածածնայ տուփից . . . | 24 | 12 |
| 6 | Դռնաբացէքից . . . . . | 16 | — |
| 7 | Կիսայրեալ մոմի վաճառումից . . . | 150 | 63 |
| 8 | Տարլայի արդիւնք . . . . | 2 | 68 |
| 9 | Տօնի օրը տեղի վարձ մրգավաճառից . . | 8 | — |
| | Գումար . | 2184 | 52 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ . | 5334 | 86 |

### ԵԼՔ

| | | | |
|---|---|---|---|
| 1 | Զափարերական մատեանի գին . . . | 10 | — |
| 2 | Աւագ պահարանից գնուած մոմին վճարուած է | 600 | — |
| 3 | Դպիրներին և ժամկոչին վճարուած է . . | 592 | 03 |
| 4 | Նպաստ Տ. Տէր-Դաւթեանին . . . | 35 | — |
| 5 | Մողնոյ տուպիկի տան դռնապանին և աղբ թափողին . . . . . | 30 | 80 |
| 6 | Զանազան մանր ծախս՝ նաւթ, ածուխ, լուցկի այլն . . . . . . | 79 | 01 |
| 7 | Ծխականներին հրաւիրելու հրաւէրների տպագրութեան- ցրուելու և լրագրներում յայտարարութիւններ տպելու . . . | 17 | 40 |
| 8 | Կալուածների մանր նորոգութեանց . . | 28 | 95 |
| 9 | Նպաստ մղդսի Սեդրակ Մանուկեանին . . | 20 | — |
| 10 | Վենափառի դալստեան և կեցութեան եկեղ. վրայ մանատրուած և պատգամաւորի էջմիածին գնալու . . . | 55 | — |
| 11 | Տօնի օրը ծախք լուսաւորութեան, պահապանների, ոստիկ. և այլն . . . | 16 | 65 |
| 12 | Կալուածների ապահովագրութեան „Якорь“ ընկ. | 33 | 61 |
| | Գումար . | 1518 | 45 |
| | Առ 1-ն Յունուարի 1911 թ. մնում է առձեռն պատրաստի դրամ և մոմ . . . | 3816 | 41 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ . | 5334 | 45 |

# ՀԱՇԻՒ

## Բեդղեհէմի ս. Աստուածածին եկեղեցու 1912 թւի

### ՄՈՒՏՔ

| | | | |
|---|---|---|---|
| | Առ 1-ն Յունուարի 1912 թ. մնում էր պատրաստի դրամ և մոմ . . . | 4555 | 91 |
| | 1912 թ. ընթացքում մուտք գոյացել է | | |
| 1 | Աւագ պահարանից գնուած մոմի վաճառումից | 1327 | 82 |
| 2 | Կիսայրեայ մոմի վաճառումից . . . | 149 | 38 |
| 3 | Կալուածների վարձագին ստացուել է . . . | 630 | 60 |
| 4 | Լուսագին մկրտութեան, վարձ դիասեղանի, դիազարդի, թաղերի, ջահերի և մոմակալների . . . . . . | 52 | 75 |
| 5 | Դռնբացէքից . . . . . | 13 | – |
| 6 | Բաց գանձանակից . . . . | 6 | 04 |
| 7 | Խաչահանէք . . . . . | 1 | 50 |
| 8 | Տաբլայի արդիւնք . . . . | 9 | 66 |
| 9 | Տուփից գոյացել է . . . . | 36 | 65 |
| 10 | Տօնի օրը գետնի վարձ . . . . | 8 | — |
| 11 | Մոմի թղթի վաճառումից . . . | 1 | 88 |
| | Գումար . | 2237 | 28 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ . | 6793 | 19 |

### ԵԼՔ

| | | | |
|---|---|---|---|
| 1 | Աւագ պահարանից գնուած է մոմ . . | 632 | 50 |
| 2 | Զափաբերական ժամեանին . . . | 10 | — |
| 3 | Ռոճիկ գործակալին . . . . | 25 | — |
| 4 | Վճարուած է ռոճիկ դպիրներին և ժամկոչին . | 512 | — |
| 5 | Նպաստ Տէր-Դաւթեանին . . . | 60 | - |
| 6 | Նպաստ դպիրներին . . . . | 11 | 20 |
| 7 | Նորոգութեանց կալուածների . . . | 359 | 15 |
| 8 | Զանազան մանր ծախք՝ նաւթ, ածուխ, աւել և այլն . . . . . | 77 | 93 |
| 9 | Մողնոյ տուպիկի դռնապանին . . . | 8 | 40 |
| 10 | Գնահատական տուրք եկեղ. կալուածների . | 132 | 25 |
| 11 | Նորին Վեհափառութեան կեցութեան և գալստեան համար եկեղեցու վրայ մասնաւորուած ծախս . . . . . | 30 | — |
| 15 | Տօնի օրը այլ և այլ ծախս լուսաւորութեան, մշակների, սախտակամածի և այլն . | 13 | — |
| 13 | Հրաւիրաթերթերի . . . . | 2 | 50 |
| 14 | Կալուածների ապահովագրութեան. „Якорь"ընկ | 30 | 68 |
| | Գումար . | 1904 | 61 |
| | Առ 1 Յուն. 1913 թ. մնում է դրամով և մոմով | 4888 | 58 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ . | 6793 | 19 |

# ՀԱՇԻՒ

## Բեդղեհէմի ս. Աստուածածին եկեղեցու 1913 թւի

### ՄՈՒՏՔ

| | | | |
|---|---|---|---|
| | Առ 1 Յունուարի 1913 թ. մնում էր պատրաստի դրամ և մոմ . . . . | 4888 | 58 |
| | 1913 թ. ընթացքում մուտք գոյացել է՝ | | |
| 1 | Աւագ պահարանից գնուած ամբողջ մոմի վաճառումից . . . . . | 1280 | 68 |
| 2 | Կիսայրեալ մոմի վաճառումից . . . | 134 | 38 |
| 3 | Գանձանակից . . . . . | 12 | 99 |
| 4 | Դռնբացէք . . . . . | 11 | — |
| 5 | Եկեղեցական կալուածներից վարձագին . | 864 | 50 |
| 6 | Լուսագին մկրտութեան, վարձ դիագարդի, ջահերի, մոմակալների, դիասեղանի և պսակի թագերի . . . . . | 108 | 18 |
| 7 | Տուփից . . . . . | 2 | 50 |
| 8 | Տաբլայի արդիւնք . . . | 6 | 33 |
| 9 | Կրամիտի վաճառումից . . . | 26 | 40 |
| 10 | Տօնի օրը տեղի վարձ մրգավաճառից . . | 8 | — |
| | Գումար . | 2454 | 96 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ . | 7343 | 54 |

### ԵԼՔ

| | | | |
|---|---|---|---|
| 1 | Ռոճիկ գործակալին և մատենի գին . . | 35 | — |
| 2 | Աւագ պահարանից գնուած մոմին վճարուած է | 618 | 75 |
| 3 | Դպիրներին և ժամկոչին վճարուած է . | 515 | — |
| 4 | Գնահատական տուրք . . . . | 222 | 92 |
| 5 | Նպաստ Տ. Տէր-Դաւթեանին . . . | 75 | — |
| 6 | Նպաստ մղդսուն . . . . . | 5 | — |
| 7 | Մօղնոյ տուպիկի տան դռնապանին և աղբ թափողին . . . . . | 15 | 60 |
| 8 | Զանազան մանր ծախս՝ նաւթ, ածուխ, լուցկի այլն . . . . . . | 112 | 06 |
| 9 | Նորոգութեան և ջրի . . . . | 102 | 89 |
| 10 | Ծխականներին հրաւիրելու հրաւէրների տպագրութեան և ցրուելու . . . | 6 | 30 |
| 11 | Ապահովագրութեան „Якорь" ընկ. . . | 33 | 28 |
| 12 | Տօնի օրը ծախք լուսաւորութեան, պահապանների, ոստիկ. և այլն . . . | 7 | 80 |
| 13 | Էջմիածին գնացող պատգամաւորի . . | 7 | — |
| 14 | Գնուած են ժամաշապիկներ . . . . | 10 | 93 |
| 15 | Տաբլայից մասն քահանային . . . . | 10 | — |
| | Գումար . | 1777 | 53 |
| | Առ 1-ն Յունուարի 1914 թուի մնում է Առևտրական բանկում № 43 անդորրագրով . | 1000 | |
| | Երեցփոխի մօտ դրամով և մոմով . . . | 4566 | 01 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ . | 7343 | 54 |

# ՀԱՇԻՒ

## Բեդղեհէմի ս. Աստուածածին եկեղեցու 1914 թուի

### ՄՈՒՏՔ

| | | | |
|---|---|---|---|
| | Առ 1-ն Յունվարի 1914 թ. մնում էր պատրաստի դրամով և մոմով . . . | 5566 | 01 |
| | 1914 թ. ընթացքում ստացուել է մուտք | | |
| 1 | Աւագ պահարանից գնուած ամբողջ մոմից . | 1183 | 80 |
| 2 | Կիսայրեալ մոմի վաճառումից . . . | 148 | 45 |
| 3 | Բաց գանձանակից . . . | 24 | 65 |
| 4 | Խաչհանէք . . . | 1 | — |
| 5 | Եկեղեցական կալուածներից վարձագին . | 760 | — |
| 6 | Տուփից գոյացել է . . . | 20 | 94 |
| 7 | Դռնաբացէքից . . . . | 12 | — |
| 8 | Տաբլայի արդիւնք . . . | 11 | 21 |
| 9 | Լուսագին մկրտութեան, վարձ դիագարդի, թաղերի, ջահերի, դիասեղանի . | 87 | 80 |
| 10 | Տօնի օրը լիմոնադ ծախողից . . | 6 | — |
| 11 | Ստացուած է հոգաբարձութեան նախկին նախագահ պ. Գ. Տէր-Դաւթեանի ուսում. նպաստից . . . | 110 | — |
| 12 | Աշակերտուհիների թոշակադրամից . . | 40 | 90 |
| | Գումար . | 2406 | 75 |
| | Ծանօթ. — Տան շինութեան համար ստացուած է Գէորգ ա. ք. Մեհրաբեանից և Քալանթարեանից . . . . . . | 2600 | — |
| | ԸՆԴԱՄԵՆԸ . | 10572 | 76 |

### ԵԼՔ

| | | | |
|---|---|---|---|
| 1 | Գնուած է աւագ պահարանից մոմ . . . | 570 | 15 |
| 2 | Վճարուած է դպիրներին և ժամկոչին ռոճիկ . | 496 | 55 |
| 3 | Նպաստ Տէր-Դաւթեանին . . . . | 60 | — |
| 4 | Այր թափող մշակին և գիշերապահին Մողնոյ տուպիկի . . . . . . | 26 | 40 |
| 5 | Զանազան մանր ծախք՝ ածուխ, նաւթ և այլն | 96 | 71 |
| 6 | Նպաստ սպասաւորներին տօներին . . . | 4 | — |
| 7 | Գործակալական ռոճիկ (1911—1914 թ.) և մատենի գին . . . . . | 60 | — |
| 8 | Ջրի փող քաղաքային վարչութեան . . | 9 | 16 |
| 9 | Նորոգութեանց . . . . . . | 17 | 73 |
| 10 | Հրաւէրներ տպագրելու և ցրելու . . . | 16 | — |
| 11 | Ներսիսեան դպրոցի պատգ. ընտր. պահապ. հրաւ. | 22 | 65 |
| 12 | Տօնի օրը ծախս պահապաններին, լուսաւորութ. | 7 | 62 |
| 13 | Գնուած են սպասարաններ և երկու նոր շուրջառներ . . . . . . | 180 | 10 |
| 14 | Տուած է հնագրի Վեհափառի անուանակոչ. շնորհ. համար. . . . . . | 4 | 71 |
| 15 | Գետնահարկ վճարուած է . . . . | 167 | 80 |
| 16 | Գոյից նոր ցուցակներ կազմելու . . . | 11 | — |
| 17 | Շուրջառ նորոգելու վճարուած է . . . | 4 | 95 |
| 18 | Դպրոցի նորոգութեան վճարուած է . . | 153 | 55 |
| 19 | » պիտոյից համար գնուած է . . | 87 | 48 |
| 20 | Ուսուցչի և վարժուհու ռոճիկ . . . | 410 | — |
| 21 | Ապահովագրութեան . . . . . | 33 | 28 |
| 22 | Դպրոցի ծառային . . . . . | 80 | — |
| | Գումար . | 2519 | 84 |
| | Ծանօթ.—1) Մողնոյ տուպիկի տան շինութեան վրայ ծախսուած է . . . | 6315 | 47 |
| | 2) 1913 թ. դպրոցական ծախս եղել է . . | 610 | 63 |
| | Ընդամենը . | 9445 | 94 |
| | 3) Վաճառականական բանկում դրուած է № 43 անդորրագրով . . . . . | 1000 | — |
| | Ընդամենը . | 10445 | 94 |
| | Այս հաշուով առ 1ն Յունուարի 1915 թուի մնում է մոմով և դրամով . . . | 126 | 82 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ . | 10572 | 76 |

# ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆ

Բեդղեհէմի Ս. Աստուածածնի եկեղեցու երեցփոխանի գործունէութեան վերստուգիչ յանձնաժողովի 1914 թ.ի Նոյեմբերի 2-ին կազմած արձանագրութեան դէմ կէտ առ կէտ նոյն եկեղեցու երեցփոխան Վասիլ Աւանեանցի կողմից. 1915 թ. Մարտի 8-ին.

1. Արձանագրութեան 2-դ կէտի դէմ—եկեղեցապատկան անշարժ կալուածքները խարխուլ դրութեան մէջ ընկել են ինձանից շատ և շատ տարիներ առաջ, որոնց հիմնովին նորոգելու համար պահանջվում էր մեծ գումարներ, որից զուրկ էր մեր եկեղեցին և իմ իրաւասութիւնից էլ դուրս էր։ Որքան հնարաւոր եղաւ, եղած կալուածները պահպանեցի և ազատեցի խարխուլ դրութեան մէջ ընկնելուց և հնարաւորին չափ արդիւնաւորեցի առաջուանից էլ բաւական մեծ չափով։ Իմ պաշտօնավարութեանս ժամանակ ոչ մի կալուածք խարխուլ դրութեան պատճառաւ չի մնացել առանց արդիւնքի, այլ ընդհակառակը, հնումն խարխուլ և ապարդիւն մնացած կալուածքներից երկուսը՝ մինը հիմնովին մեծ և արդիւնաւոր շինութիւն է շինուել և միւսը կիսով չափ նոր սենեակ է շինուել և որոնցից ներկայումս մի պատկառելի գումար է ստացվում իբրև վարձագին։ Ցաւում եմ, որ յարգելի հաշուետեսները ի նկատի չեն առել։

Արձանագրութեան 3-րդ կէտի դէմ.—եկեղեցապատկան կալուածքները բաղկացած են այնպիսի աննշան բնակարաններից, որ ոչ մի հնարաւորութիւն չկար շահեցման առանձին պայմաններ դրելու և կարիք էլ չկար աւելորդ ծախքեր անելու. բնակարանների ամսական վարձի քանակը մուծուած են ամեն անգամ անդորրագրական մատեանի մէջ. իսկ Երուսալիմսկի փողոցում և Մողնու տուպիկում եղած կալուածքները, որոնք շինուել են իմ պաշտօնավարութեան ժամանակամիջոցում, նրանց շահեցման համար կան նօտարական պայմանագրեր։ Ես միշտ հետևել եմ Տփխիսի ապահով եկեղեցիների կալուածքների շահեցման եղանակին, մանաւանդ, որ իմ նախորդներից ևս այդ ձևով եմ ստացել։ Այդ մասին հոգևոր իշխանութիւնից ոչ մի հրահանգ չի եղել ընդհանուր եկեղեցապատկան կալուածքների շահեցման ձևի փոխելու առթիւ։

3. Արձանագրութեան 4-րդ կէտի դէմ.—Նոր տան շինութեան խնդրում չգիտեմ թէ ինչու են յարգելի հաշուետեսները ծանրա-



ցել ինձ վերայ. տունը շինելէ շինարարական հոգաբարձութիւնը. ինձ մօտ գտնւում էին տան շինութեան ծախքերի բոլոր հաշիւները և ճարտարապետների կազմած վերջնական ծախքի հաշիւը, իբրև շինարարական հոգաբարձութեան գանձապահ և բոլորն էլ ներկայացրել եմ յարգելի հաշուետեսներին. ինձ մօտ ուրիշ թղթեր չը կային և չէին էլ կարող լինել, որ ներկայացնէի։ Շինարարական հոգաբարձութիւնը իրեն ժամանակին, նախկին Թեմակալ Առաջնորդ տ. Եփրեմ Եպիսկոպոսին յանձնել է այդ շինութիւնը առ տեղեաւ ներկայութեամբ շինարարական հոգաբաձութեան ճարտարապետներ պ. պ. Տէր Սարգսեանցի և Խարազեանցի և ծխականներից մի քանիսի, որտեղ Գերապատիւ Սրբազան հայրը շնորհակալութեամբ ընդունել է և վերջացրել տան շինութեան գործը։ Թեպէտ այդ տան շինութեան գործը միանգամայն վերջացած է և ստուգած է թէ ճարտարապետների և թէ հոգևոր իշխանութեան կողմից, վերջնականապէս էլ ընդունուած է 1910 թուին և շնորհակալութիւն է յայտնուած շինարարական հոգաբարձութեան, որը բաղկացած էր հինգ անդամներից, բայց այնուամենայնիւ յանձնաժողովը կարող էր դիմել յիշեալ շինարարական հոգաբարձութեան, եթէ հետաքրքրվում էր այդ գործով։

4. Արձանագրութեան 5-րդ կէտի դէմ.—Եկեղեցու շարժական գոյքը պահել եմ մեծ խնամքով և զգուշութեամբ. ոչ մի բան պակաս չէ։ Անցեալ տարուայ վերջին ամիսներին, հոգևոր իշխանութիւնը Ս. Սինոդի հրամանի համաձայն, կարգադրել էր ամբողջ թեմի եկեղեցիների շարժական և անշարժ գոյքի նոր ցուցակներ կազմելու ըստ առաջարկած նոր ձևի. արժանապատիւ միաբանութեան հետ միասին կազմեցի նոր ցուցակ, որից երևեցաւ, որ հին ցուցակների համաձայն, բոլոր իրերը անձեռնմխելի գոյութիւն ունին անպակաս և բացի սոցանից մեծ քանակութեամբ էլ ոսկեայ, արծաթեայ և թանկագին անկնեղէններ ևս աւելացուեցան ցուցակի մէջ իմ պաշտօնավարութեան ժամանակամիջոցում ընծայաբերուած, որոնք գտնվում են եկեղեցու խորանում փակի տակ։ Ներկայումս կանոնաւոր ցուցակ է գրուած, որի իսկականը ուղարկուած է հոգևոր իշխանութեան, իսկ պատճէնը գտնվում է եկեղեցական գործերի մէջ, որը ներկայացնում եմ յարգելի ժողովին։

5. Արձանագրութեան 6-րդ կէտի դէմ.—Յարգելի հաշուետեսները իմ հաշիւներս քննելու ժամանակ, գտել են, որ ծախքի մի քանի մանր ծախքերի դիմաց փաստաթղթեր չկան. ես զարմանում եմ, թէ ինչ կարիք կար արձանագրութեան մէջ առանձին տեղ շնորհելու այդ աննշան ծախքերի փաստաթղթեր չլինելուն, ինչպէս օրինակ—ծաղկազարդի ուռի ճիւղերի, Վերափոխման խաղողի, սովորական առօրեայ մանր ծախքերի—լուցկի, նաւթ, ա-

# ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆ

Բեդղեհէմի Ս. Աստուածածնի եկեղեցու երեցփոխանի գործունէութեան վերատեսուչ յանձնաժողովի 1914 թւի Նոյեմբերի 2-ին կազմած արձանագրութեան դէմ կէտ առ կէտ նոյն եկեղեցու երեցփոխան Վասիլ Աւանեանցի կողմից. 1915 թ. Մարտի 8-ին.

1. Արձանագրութեան 2-դ կէտի դէմ—եկեղեցապատկան անշարժ կալուածքները խարխուլ դրութեան մէջ ընկել են ինձանից շատ և շատ տարիներ առաջ, որոնց հիմնովին նորոգելու համար պահանջւում էր մեծ գումարներ, որից զուրկ էր մեր եկեղեցին և իմ իրաւասութիւնից էլ դուրս էր։ Որքան հնարաւոր եղաւ, եղած կալուածները պահպանեցի և ազատեցի խարխուլ դրութեան մէջ ընկնելուց և հնարաւորին չափ արդիւնաւորեցի առաջուանից էլ աւելի մեծ չափով։ Իմ պաշտօնավարութեանս ժամանակ ոչ մի կալուածք խարխուլ դրութեան պատճառաւ չի մնացել առանց արդիւնքի, այլ ընդհակառակը, հնումն խարխուլ և ապարդիւն մնացած կալուածքներից երկուսը՝ մինը հիմնովին մեծ և արդիւնաւոր շինութիւն է շինուել և միւսը կիսով չափ նոր սենեակ է շինուել և որոնցից ներկայումս մի պատկառելի գումար է ստացւում իբրև վարձագին։ Ցաւում եմ, որ յարգելի հաշուետեսները ի նկատի չեն առել։

Արձանագրութեան 3-րդ կէտի դէմ.—եկեղեցապատկան կալուածքները բաղկացած են այնպիսի աննշան բնակարաններից, որ ոչ մի հնարաւորութիւն չկար շահեցման առանձին պայմաններ դնելու և կարիք էլ չկար աւելորդ ծախքեր անելու. բնակարանների ամսական վարձի քանակը մուծուած են ամեն անգամ անդորրագրական մատեանի մէջ. իսկ Երուսաղիմսկի փողոցում և Մողնու տուպիկում եղած կալուածքները, որոնք շինուել են իմ պաշտօնավարութեան ժամանակամիջոցում, նրանց շահեցման համար կան նոտարական պայմանագրեր։ Ես միշտ հետևել եմ Տփխիսի ապահով եկեղեցիների կալուածքների շահեցման եղանակին, մանաւանդ, որ իմ նախորդներից ևս այդ ձևով եմ ստացել։ Այդ մասին հոգևոր իշխանութիւնից ոչ մի հրահանգ չի եղել ընդհանուր եկեղեցապատկան կալուածքների շահեցման ձևի փոխելու առթիւ։

3. Արձանագրութեան 4-րդ կէտի դէմ.—Նոր տան շինութեան խնդրում չգիտեմ թէ ինչու են յարգելի հաշուետեսները ծանրա-



ցել ինձ վերայ. տունը շինելէ շինարարական հոգաբարձութիւնը. ինձ մօտ գտնւում էին տան շինութեան ծախքերի բոլոր հաշիւները և ճարտարապետների կազմած վերջնական ծախքի հաշիւը, իբրև շինարարական հոգաբարձութեան գանձապահ և բոլորն էլ ներկայացրել եմ յարգելի հաշուետեսներին. ինձ մօտ ուրիշ թղթեր չը կային և չէին էլ կարող լինել, որ ներկայացնէի։ Շինարարական հոգաբարձութիւնը իրեն ժամանակին, նախկին Թեմակալ Առաջնորդ տ. Եփրեմ Եպիսկոպոսին յանձնել է այդ շինութիւնը առ տեղեաւ ներկայութեամբ շինարարական հոգաբաձութեան ճարտարապետներ պ. պ. Տէր Սարգսեանցի և Խարազեանցի և ծխականներից մի քանիսի, որտեղ Գերապատիւ Սրբազան հայրը շնորհակալութեամբ ընդունել է և վերջացրել տան շինութեան գործը։ Թեպէտ այդ տան շինութեան գործը միանգամայն վերջացած է և ստուգած է թէ ճարտարապետների և թէ հոգևոր իշխանութեան կողմից, վերջնականապէս էլ ընդունուած է 1910 թւին և շնորհակալութիւն է յայտնուած շինարարական հոգաբարձութեան, որը բաղկացած էր հինգ անդամներից, բայց այնուամենայնիւ յանձնաժողովը կարող էր դիմել յիշեալ շինարարական հոգաբարձութեան, եթէ հետաքրքրւում էր այդ գործով։

4. Արձանագրութեան 5-րդ կէտի դէմ.—Եկեղեցու շարժական գոյքը պահել եմ մեծ խնամքով և զգուշութեամբ. ոչ մի բան պակաս չէ։ Անցեալ տարուայ վերջին ամիսներին, հոգևոր իշխանութիւնը Ս. Սինոդի հրամանի համաձայն, կարգադրել էր ամբողջ թեմի եկեղեցիների շարժական և անշարժ գոյքի նոր ցուցակներ կազմելու ըստ առաջարկած նոր ձևի. արժանապատիւ միաբանութեան հետ միասին կազմեցի նոր ցուցակ, որից երևեցաւ, որ հին ցուցակների համաձայն, բոլոր իրերը անձեռնմխելի գոյութիւն ունին անպակաս և բացի սոցանից մեծ քանակութեամբ էլ ոսկեայ, արծաթեայ և թանկագին անկնեղէններ ևս աւելացուեցան ցուցակի մէջ իմ պաշտօնավարութեան ժամանակամիջոցում ընծայաբերուած, որոնք գտնվում են եկեղեցու խորանում փակի տակ։ Ներկայումս կանոնաւոր ցուցակ է գրուած, որի իսկականը ուղարկուած է հոգևոր իշխանութեան, իսկ պատճէնը գտնվում է եկեղեցական գործերի մէջ, որը ներկայացնում եմ յարգելի ժողովին։

5. Արձանագրութեան 6-րդ կէտի դէմ.—Յարգելի հաշուետեսները իմ հաշիւներս քննելու ժամանակ, գտել են, որ ծախքի մի քանի մանր ծախքերի դիմաց փաստաթղթեր չկան. Ես զարմանում եմ, թէ ինչ կարիք կար արձանագրութեան մէջ առանձին տեղ շնորհելու այդ աննշան ծախքերի փաստաթղթեր չլինելուն, ինչպէս օրինակ—ծաղկազարդի ուռի ճիւղերի, Վերափոխման խաղողի, սովորական առօրեայ մանր ծախքերի—լուցկի, նաւթ, ա-

ծուխ, ալիւր, աւել, ապակի գցելու և այլն։ Մի՞թէ երկարամեայ և հաւատարմութեամբ ծառայած երեցփոխանը այդ աստիճան էլ վստահութիւն չպէտք է ունենայ իւր բազմից ընտրող յարգելի ծխականների առաջ, որ ստիպուած լինի այդպիսի մանր-մունր առօրեայ ծախքերի համար դիմելու վրացի, թուրք և այլազգի վաճառականներին միքանի կոպէկանոց փաստաթղթեր ձեռք բերելու։ Նոյնիսկ հոգևոր իշխանութեան հրատարակած հրահանգը չի պահանջում առօրեայ սովորական ծախքերի փաստաթղթեր ունենալու։ Այդպիսի ծախքերը կատարուել են ժամկոչի ձեռքով, որ ես ինքս եմ ստուգել։ Որ ես ոչ մի զեղծման նպատակ չեմ ունեցել եկեղեցուց կոպէկներ կորզելու նպատակով, այդ երևում է նոյն՝ իսկ հաշուետեսների ստուգած 1909 թուի հաշուեմատեանից, որտեղ ի վնաս իմ գրպանի միենոյն մուտքը երկու անգամ եմ մուծել։

Տոկոսների մասին ունիմ յայտնելու հետևեալը.— Մինչև 1909 թուականը եկեղեցապատկան դրամագլխի տոկոսները առևտրական բանկը միշտ դրամագլխի վրայ է աւելացրել, որովհետև գրուած է եղել ի շահեցողութիւն առևտրական բանկում եկեղեցու անունով. իսկ 1909 թուականից, երբ Մողնու տուպիկում եղած եկեղեցապատկան աւերակ և խարխուլ տան հիմնովին շինութեան գործը սկսուեց, այն ժամանակից եկեղեցապատկան պատրաստի մօտաւորապէս 2000 րուբլի ամբողջ գումարի հետ ծախսուեցան նա և պ. Արտեմ Քալանթարեանից և արժ. Գէորգ ա. ք. Մեհրաբեանից ստացուած 2600 րուբլի գումարը տան շինութեան վրայ շինարարական հոգաբարձութեան միջոցաւ։ Հետևապէս 1909 թուին և մինչև 1910 թուի վերջը եկեղեցին ոչ մի պատրաստի գումար չէր կարող ունենալ, որ տոկոսներ մուծուէին։ Այդ թուականներին եթէ մի որևէ արդիւնք էր լինում, վճարվում էր տան շինութեան ծախքերի մնացած պարտքերի հաշուին։ Մանաւանդ որ եկեղեցու հաշուեմատեանները մօտաւորապէս 3—4 տարի գտնվում էին հաշուետեսների մօտ և հնարաւորութիւն չունէի տան շինութեան ծախքը մուծել իրեն ժամանակին համապատասխան մատեանում և մնացորդ գումարի տոկոսներն էլ աւելացնել վրան։ Երբ, յիշեալ պ.պ. հաշուետեսներից 1913 թ. դեկտեմբերի 23-ին, հոգևոր իշխանութեան միջոցաւ հազիւ հազ յետ ստացուեցան եկեղեցու մատեանները համարեայ թէ առանց քննութեան, այն ժամանակ հոգևոր իշխանութիւնը յանձին եկեղեցիների հայր գործակալ բարձր արժ. Սարգիս աւագ. քահ. Շիօյեանցի՝ քննեց մանրամասն. և ապա մանրամասն ստուգութիւնից յետոյ ամենայն տարուայ տոկոսները դրամագլխի հետ միացնելով կազմեց մի գումար, որից մի հազար րուբլի (1000 ր.) անմիջապէս տրուեց ի շահեցողութիւն Տփխիսի վաճառականական դրամատանը եկեղեցու անունով 1914 թուի փետրվարի 22-ին։



Այդ հաշիւների մասին հայր գործակալը կազմել էր մանրամասն արձանագրութիւն, որը հաշուեմատեանների հետ ներկայացրուեց նորընտիր պ.պ. հաշուետեսներին նորից քննելու, սակայն չը գիտեմ թէ ինչ միտումներով չեն կամեցել յարգելի հաշուետեսները ի նկատի առնել կանոնաւոր հաշուած հաշիւները և ընդունել։

Վերջացնելով բացատրութիւնս պատիւ ունիմ յայտնել յարգելի ծխականներիդ, որ յարգելի հաշուետեսները, իրենց կազմած արձանագրութեան համաձայն, գտել են որ առ 1-ն յունվարի 1914 թուի, չը հաշուելով տան շինութեան վրայ ծախսած 6315 րուբլի 47 կոպէկ գումարի, ինձ մօտ պէտք է լինի 4993 րուբլի 99 կոպէկ։ Այս գումարի դէմ ծախսել եմ և ունիմ պատրաստի դրամ.—

1. Շինարարական հոգաբարձութեան միջոցով ծախսած 6315 րուբլի 47 կոպէկ, 2. Վաճառականական դրամատանը ունիմ եկեղեցու անունով 1050 րուբլի և 3. Մի փոքրիկ գումարն էլ մօտաւորապէս 300 րուբլի առ ձեռն դրամ դպրոցի առօրեայ ծախքերի համար։

Ընդամենը 7665 րուբլի 47 կոպէկ, որի պակասորդը լրացրել եմ պ. Արտեմ Քալանթարեանից և Գէորգ ա. քահ. Մեհրաբեանից կանխիկ ստացած 2600 րուբլի տան վարձ։ Պարոններ, ես իմ ուժիցս ի վեր. ամբողջ 11 տարի, ամենայն ջերմեռանդութեամբ և հաւատարմութեամբ ծառայել եմ և տարել եմ ամեն տեսակ դժուարութիւններ իմ Աստուածածնի սիրոյ համար, հաւատացած լինելով, որ եթէ մարդիկ չեն տեսնի, ամեն իմաստ Աստուած միշտ կը տեսնի և կը վարձատրի. իսկ եթէ մատեանները նահապետական ձևով եմ պահել, այդ դէպքումն էլ ի նկատի եմ ունեցել, ամեն անգամ, եկեղեցու շահերը և չեմ կամեցել առանձին հաշուապահ պահելով աւելորդ ծախքեր անել։

Երեցփոխան Վ. Աւանեանց

---

Վերոյիշեալ գրութիւնները ի նկատի ունենալով կարելի է գալ այն եզրակացութեան, որ երեցփոխան Վասիլ Աւանեանը իւր տասնամեայ պաշտօնավարութեան ընթացքում աւելի արդիւնաւորել է եկեղեցին և ոչ մի նիւթական զրկանք կամ վնաս չէ տուել, որի համար արժանի է ամեն խրախուսանքի։

Փաստացի ապացուցանելու համար մի առ մի գրի անցկացնենք թէ նրա տուած օգուտները և թէ այն թերութիւնները, որը այսպէս թէ այնպէս ուզում են փաթաթել պ.պ. հաշուետեսները, առանց մտածելու մի րոպէ, որ եթէ բարեխիղճ և անձնուէր մարդկանց հետ այդպէս վարուենք, ոչ մի անշահասէր անձնաւորութիւն

չի գալ ծառայելու հասարակական գործերին և տարապարտուց իւր բարի անունն էլ վտանգի ենթարկել։ Ա) պ. պ. հաշուետեսները խոստովանում են, որ կալուածներից ոչ մէկը օտարացրած չէ և ստացուած ցուցակի հետ ճիշտ, սակայն այդ կալուածները գտնվում են խարխուլ դրութեան մէջ և նորոգած չեն։

Համաձայն ենք պ.պ. հաշուետեսների կարծիքի հետ, որ տները խարխուլ դրութեան մէջ են, որ նրանց հարկաւոր է նորոգել, հների տեղ նորերը կառուցանել և դորանով եկեղեցու եկամուտները կրկնապատկել. խօսք չկայ լաւ է և ամենքին ընդունելի։ Բարեխիղճ երեցփոխանը առաջինը ինքը կհրճուէր, կուրախանայ, երբ նկատէր, որ իւր երեցփոխանութեան օրով խարխուլ տների տեղ նորակառոյց գեղեցիկ տներ են կառուցվում. բայց… բայց չէ՞ որ այդ բոլորը միանգամից անհնար է, անկարելի և դորա համար միջոցներ են հարկաւոր։ Ո՞ւր էին այդ միջոցները, ինչու պ.պ. հաշուետեսները չեն ցոյց տալիս թէ ահա այս ինչ գումարով այս կարելի էր անել, այն ինչ դրամով միւսը կառուցանել։ Ենթադրութիւններ և ծրագիրներ կազմելը և այն էլ թղթի վերայ, կաբինետում նստած, շատ հեշտ և դիւրին է իսկ իրականութեան մէջ շատ դժուար և նոյն իսկ անկարելի։

Եւ վերջապէս չէ՞ որ պ. Վ. Աւանեանը ամենայն բարեխղճութեամբ պահպանել է այն բոլորը ինչ որ յանձնուել է նրան և հնար եղածին չափ նորոգել, արդիւնաւորել նրանց եկամուտները։ Օրինակ՝ Երուսալիմսկի փողոցի վրայ եկեղեցապատկան մի խարխուլ սենեակ, որ առաջ բերում էր չնչին վարձ, նորոգուել է և այժմ տալիս է եկեղեցուն տարեկան 276 րուբլի։

Եւ միթէ հենց Մողնոյ տուպիկի գետնի վրայ կառուցուած տունը, որ ներկայիս արժէ աւելի քան 10,000 րուբլի պերճախօս ապացոյց չէ, որ չնչին գումարով մի նոր կալուածք է կառուցուել, որը տարեկան զուտ արդիւնք է տալիս 1000 րուբլի և ապահովեցնում դպրոցի գոյութիւնը։

Մողնոյ տուպիկի տունը կառուցուել է համաձայն հոգևոր իշխանութեան 5-ն յունիսի 1909 թ. № 2340 հրամանի շինարարական մասնաժողովի և երեցփոխանի ձեռնարկութեամբ և հսկողութեամբ։ Նախ ծրագրած է եղել կառուցանել մի յարկանի տուն համաձայն կազմած սմետայի այն է՝ 3599 ր. 56 կ. սակայն վերջերս նկատուելով, որ եկեղեցուն ձեռնտու չէ մի յարկից տուն, որովհետև հողը, ուր կառուցւում է տունը հիմքը խարխուլ է, տունը աւելի կայուն և լաւ շինելու համար պահանջւում է ա[illegible] շատ գումար. կազմւում է նոր սմետա և նոր մակարդակ և ներկայացւում հոգևոր իշխանութեանը ի հաստատութիւն։ Այդ սմետայով տունը կառուցվում է երկյարկանի իւր ամեն յարմարութիւններով և ծախսւում է ընդամենը 6315 ր. 47 կոպ.։



Բայց պէտք է ի նկատի ունենալ, որ շինարարական մասնաժողովը երեցփոխի հետ ի նկատի ունենալով, որ նորակառոյց տունը մեծամեծ ծախսեր է պահանջելու իսկ այդ գումարը չկար, որոշում են նախ քան տան կառուցանելը, ապագայ շինուելիք տունը տալ աճրդով մի անձի, որը կցանկանար կանխիկ վճարել մի որոշ գումար տան շինութեան համար։ Այդ գործը գլուխ բերելու համար հոգևոր իշխանութեան հաճութիւնը և պաշտօնական թոյլտուութիւնը ստանալով հրապարակական աճուրդ են նշանակում և այդպիսով ստանում պակասորդ 2600 ր. գումարը։

Այդ աճուրդը հաստատում է հոգևոր իշխանութիւնը 30-ն սեպտ. 1909 թ. № 4087 հրամանով, որը մնում է Քալանթարեանի վերայ և տունը աւարտուելուց յետոյ յանձնւում նրան։

Բայց նախ քան նրան յանձնելը, տունը պատրաստուելուն պէս, ընդունում է հոգևոր իշխանութիւնը և տ. Եփրեմ սրբազանի շնորհակալութեան և գոհութեան արժանանում թէ երեցփոխը և թէ շինարարական հոգաբարձութիւնը, որոնք բուռն ճիգ թափելով եկեղեցուն նուիրում են այդ կալուածքը ամենաչնչին գումար միայն ունենալով։

1914 թուի սեպտեմբերի 1-ից տունը արդէն ազատւում է կապալառուի պարտքից և մնում զուտ սեփականութեան եկեղեցու, տալով տարեկան մի հազար րուբլի։ Արդ, ինչ խօսակցութեան նիւթ կարող է դառնալ այդ տան շինութիւնը, երբ ամեն ինչ կատարուել է հոգևոր իշխանութիւնից, ընդունուել նրանից շնորհակալութեամբ և իբրև կենդանի վկայ տունը կանգուն լինելով, վեր կենալ և նորից հարց զարթեցնել և հարցեր տալ թէ ինչու այս այսպէս էր, ինչու այն այնպէս։ Եւ այն էլ պահանջել միմիայն երեցփոխից, քանի որ այդ տան շինութեան համար ընտրած կար յատուկ մասնաժողով։

2-րդ կէտի դէմ պ. երեցփոխանը իւր բացատրութեան մէջ պարզ բացատրում է եկեղեցական կալուածների շահեցման մասին, ուստի այստեղ աւելորդ իսկ է այդ մասին խօսել, մանաւանդ որ հոգևոր իշխանութիւնից այդ մասին տարէ-ցտարի տրւում են ժապապաւինեալ մտից և ելից հաշուեմատեաններ, որպիսի հաշուեմատեանի մէջ և գրած են Բեդղեհէմ եկեղեցու ամենատեսակ մուտքն ու ծախքը։

Ուրիշ խնդիր կլինէր, եթէ հոգևոր իշխանութիւնը փոխէր այդ սիստեմը, հրամայէր հաշուարարական ձև մտցնել և պահէր առանձին հաշուապահ առանձին վարձով, որ ի հարկէ, մի աւելորդ ծախքի դուռ կբացուէր ամեն մի եկեղեցու բիւջէի վրայ, սակայն քանի որ հոգևոր իշխանութիւնը այդ մատեաններով գոհ է մնում և ոչինչ էլ չէ տուժում, ինչ կարիք կայ միմիայն Բեդղեհէմի եկեղեցու երեցփոխից այդ բանը պահանջել։

Աւելորդ չէ՞ արդեօք այդ տարակուսութիւնը։ Մողնու տուպիկում կառուցուած սան շինութեան գործը արդէն պարզաբանուեց վերեւում։ Կառուցուած տունը կենդանի վկայ է արած ծախսերի, որոնք պարզերես կանեն պ. երեցփոխանին և պ.պ. շինարական յանձնաժողովի անդամներին։ Ցաւ ի սիրտ պէտք է այստեղ ասել. որ շինութեան վերաբերեալ կարեւոր թղթերը՝ իսկական դոկումենտները գտնւում են հենց բողոքող պ. Մուշթաֆեանի մօտ, որը չգիտեմ ինչից դրդուած, իսկական դոկումենտները իրան մօտ պահելով, միմիայն պատճէններն է ուղարկել. չնայած այդ մասին, գործակալի և հոգաբարձութեան պահանջներին։

Շարժական գոյից մասին վերաստուգիչ յանձնաժողովը ինքը վկայում է, որ գտել է ճիշտ և ոչ մի իր պակաս չէ եղել, որը անշուշտ պատիւ է բերում երեցփոխանին։

Երեցփոխանի առանձին հոգատարութեան և խնամքին է պարտական ամեն մի եկեղեցի, երբ նրա գոյքը անկորուստ պահպանւում է տարիներ շարունակ. Բեդղեհէմի եկեղեցու երեցփոխան պ. Վ. Աւանեանը ոչ միայն պահել պահպանել է եկեղեցու իրեն յանձնուած գոյքը այլ և աւելացրել 1) Մողնոյ տուպիկի տունը և 2) Երուսալիմսկի փողոցի վրայ գտնուող սենեակը։ Այդ փաստը պարզ ապացոյց է նորա անշահախնդրութեան և ազնուութեան։

Գալով դրամական հաշիւների ստուգութեան յարգելի վերաստուգող յանձնաժողովի անդամները թէև գտնում են ճիշտ և ոչ մի տարակուսութիւն չեն անում պակաս թողնուած մուտքերի կամ աւելորդ ծախսեր գրելու մասին, սակայն մի քանի նկատողութիւններ են անում ծախսերի փաստաթղթեր չլինելու համար, որ, իսկապէս, ոչ հնարաւոր էր ներկայացնել և ոչ իսկ արժէր այդ մասին յիշատակել։ Որովհետև եթէ ամեն մէկից արդարև պահանջուէր այդ տեսակ մանր-մունր բաների եռևից ընկնել և փաստաթղթեր պատրաստել տալ, այդ նշանակում է, մեր երեցփոխաններից ամեն մէկը իւր բան ու գործը մի կողմ պէտք է թողնէր և ամբողջովին նուիրուէր եկեղեցուն և նրա մի կոպէկանոց ծախսի համար էլ փաստաթուղթ պահանջէր։

Իսկ ո՞վ կարող էր իւր ընտանիքը սովի մատնէր և ինքը գնար ձրի աշխատէր եկեղեցու սիրոյն։ Չէ՞ որ երեցփոխանները, որ ձրիաբար կատարում են այդ պաշտօնները, նրանք էլ ունեն իրենց ընտանեկան հոգսերը…

Իբրև օրինակ վերցնենք յարգելի հաշուետեսների 1909 թուի ծախսերի այն յօդուածները, որոնց տակ գծել են և փաստաթղթեր են պահանջում. յօդ. 42. Յովնանեան օրիորդաց դպրոցի հոգաբարձուներ ընտրող չորս պատգամաւորների ընտրութեան համար ծխական ժողով հրաւիրելու համար յայտարարութեանց վարձ «Հովիւ» «Մշակ» և «Գործ» թերթերում 3 ր. 30 կ.—պարզ է, որ այստեղ



կեղծիք լինել չի կարող և երեցփոխանի անփութութեան պատճառով միայն անդորրագրեր չեն պահուել, իսկ արևի պէս լոյս է, որ այդ յայտարարութիւնները տպուած են։ Բաւական են նոյն տարուայ այդ թերթերը բանալ և ապացոյց կայ։

Յօդ. 54—Նորին վեհափառութեան կեցութեան ծախս մասնագրուած Բեդղ. եկեղ. վրայ վճարեց 75 րուբլի։

Գումարը բաւական խոշոր է և երեցփոխանը պարտաւոր էր փաստաթուղթ ձեռք բերել, սակայն երեցփոխանի անփութութեան պատճառով չէ ստացուել փաստաթուղթ թէև ամենքին յայտնի է, որ վեհափառութեան կեցութեան և գալստեան ծախսերը կոնսիստորիայն միշտ մասնադրում է եկեղեցիների վերայ։

Յօդ. 65—երեցփոխանը ամբողջ մի ամսուայ ընթացքում (յունիս) մանրածախս է ցոյց տալիս 3 ր. 52 կ. որ վճարել է մի փութ նաւթի 1—50 կ. Մողնոյ տուպիկի տան ֆանարի կարկատանքին, մի աչք ապակի նստացնելու և նորան դեղագործելու 40 կ., նոյն տան ծածքի 3700 հ. կրամիտ զանգակատան փողոցից փոխադրող մշակին 40 կ. նոյն տան հոգաբարձական ժողովներին գործածուած մի պաչկայ ծրար և փոստի թղթին 50 կ. տան հատ գրչածայրեր 5 կ. մի պաչկայ լուցքի 10 կ., խունկ պահելու մի փայտեայ տուփ 22 կ., ստիկանական թերթիկների չորս անուններ գրելու 35 կ.։

Ահա մի հաշիւ, որ ամեն բարեխղճութեամբ և ամեն մանրամասնութեամբ գրուած է, որին անպայման պէտք էր հաւատալ և ոչ փաստաթղթեր պահանջուէր։ Եւ միթէ հնարաւոր է այդ տեսակ մանր-մունր ծախսերի փաստաթղթերի եռևից ընկնել…

Եւ այդ տեսակ հաշիւներ պահելը անուանւում է նահապետական ձև։ Այո, նահապետական, իւր սուրբ և շիտակ եղանակով։ Ամենից առաջ, «հաւատ», այնտեղ ուր չկայ այդ հաւատը, ոչ մի հասարակական գործ չի կարող առաջ գնալ եթէ երկնքից իջած մարդիկ էլ լինեն։

Մեր եկեղեցիները դրամական այն շրջանառութիւնը չունեն, որ հնարաւոր լինի ամսական 60—100 ր. տալ և առանձին հաշուապահներ պահել, որպէսզի հնարաւոր լինի բաւարարել մեր այն ծխականներին, որոնք հաշիւները սովորեն տեսնել միմիայն կրկնակի իտալական ձևով։

Եթէ այդ ձևով լինէր, խօսք չկայ տարէ-ցտարի դրամատանը դրուած գումարների տոկոսներն էլ պարզ և որոշ կլինէր, սակայն, քանի որ մեր երեցփոխանը բաւականացել է միայն նրանով, որ դրամատանը եղած գումարի վրայ աւելացնելով տոկոսը կազմել է մի խառն գումար տոկոսների և դրամագլխի և այնպէս տացել, պարզ է որ յարգելի հաշուետեսները իրաւունք ունեն ասելու թէ «ոչ մէկը տարուայ տոկոս չէ գրուած»։

Տոկոսը կայ գումարի մէջ բայց անունը չկայ, ահա այս է իսկապէս երեցփոխան պ. Վ. Աւանեանի յանցանքը։

Չպէտք է մոռանալ և այն, որ Մողնոյ տուպիկի տան շինութեան առթիւ դրամատանը ոչ մի գումար չէր կարող ունենալ, որովհետև եկեղեցու դրամը միշտ գործածութեան մէջ էր և մինչև իսկ փոխառինութիւն էր անում։

Գալով յարգելի պ. Մութաֆեանի բողոքի խնդրին, մենք արդէն վերևում մեծ մասամբ պատասխանեցինք, ուստի հարկ չկայ նորից կրկնութիւնների մէջ ընկնելու։

Պարոնը Մողնոյ տուպիկի Նորակառոյց տան ծախքերը ստուգելու համար յատակագիծ և այլ թղթեր է պահանջում, որպէս զի հնար ունենայ ստուգելու այդ ծախսերը, սակայն ճարտարապետ պ. Տէր-Սարգսեանի 16-ն Սեպտ. 1914 թ. գրութիւնը և այն հանգամանքը, որ տունը աւարտելուն պէս ընդունուել է թէ շինարարական մասնաժողովից և թէ հոգևոր իշխանութիւնից յանձին գեր. տէր Եփրեմ եպիսկոպոսի, ամեն կասկածից դուրս պէտք է համարել և այդ խնդիրը փակուած։

Իսկ այն հարցը թէ պ. Մութաֆեանին չեն թոյլ տուել անձամբ տեսնել և զննել Նորակառոյց տունը, դա պէտք է թիւրիմացութիւն համարել, որովհետև երբէք և ոչ մի անձն չի կարող իւրաքանչիւր անհատի, ուր մնայ հաշուետեսի, ասել թէ դու այս Նորակառոյց տունը իրաւունք չունես տեսնելու կամ քննութեան ենթարկելու։

Փառք Աստուծոյ տունը կանգուն է և մեր աչքերի առաջ, հետաքրքրուողը ամեն վայրկեան կարող է տեսնել և գնահատել ևս առաւել յարգելի պ. Մութաֆեանը, որի ձեռքին գտնւում էր պատրաստի վերջին հաշիւները և ոչ մէկը չի կարող այդ բանին արգելք դնել։

Պէտք է ամեն անհատ իմանայ, որ եկեղեցական շինութիւնը հասարակական շէնք է և ամեն մարդ իրաւունք ունի հետաքրքրուել նրանով և ո՛չ երբէք իրաւունք խնդրի հետաքրքրուելու և դիտողութիւններ անելու։

---

Փակելով սոյն տեղեկագիրը, աւելորդ չի լինել երկու խօսքով ամփոփել երեցփոխան պ. Վասիլ Աւանեանի տասնամեայ գործունէութեան արդիւնքը։

1) որ Նրա տասնամեայ երեցփոխութեան ժամանակում հաշիւները եղել են ճիշտ։

2) որ Նորան յանձնուած անշարժ կալուածքերը չեն օտարացրած այլ աւելացած է 1) մի Նորակառոյց տուն մօտ 10,000 ռուբ. արժողութեամբ 2) Երուսալիմսկի փողոցի սենեակը։



3) որ շարժական գոյքը պահուել է անկորուստ և աւելացել է նորից 74 հատ ոսկէ և արծաթէ մատանիներ, խաչեր և այլն, մէկ 3 արշինանոց խալիչա, ֆրաժէլի մոմակալներ և շատ գոգնոցներ ասեղնագործ, թաւշեայ թաշկինակներ, փոքրիկ վարագոյրներ և այլ ծածկոցներ։

4) որ Նա կալուածները տարէ-ցտարի արդիւնաւորել է չնայած նորա քայքայեալ դրութեան այսպէս 1906 թ. կալուածներից վարձ ստացել է։

| | | տարբեր |
|---|---|---|
| 1906 թ. | 579 ր. | — |
| 1907 „ | 530 „ | — 49 ր. |
| 1908 „ | 518 „ | — 51 » |
| 1909 „ | 637 „ | + 58 » |
| 1910 „ | 658 „ | + 79 » |
| 1911 „ | 805 „ | +226 » |
| 1912 „ | 630 „ | + 51 » |
| 1913 „ | 864 „ | +285 » |
| 1914 „ | 760 „ | +161 » |

Այսինքն տասը տարուայ ընթացքում մօտ հազար ռուբլի աւելացրած գումար*)։

*) Ծանօթ.—Այս գումարի մէջ չէ մտնում ուսումնարանի շինութեան վարձը, որ առաջ բերում էր տարեկան 196 ռուբլի։

## ԲԵԴՂԵՀԷՄԻ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՅԱՐԳԵԼԻ ԾԽԱԿԱՆ ԺՈՂՈՎԻՆ

### *ՆՈՅՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԵՐԵՑՓՈԽԱՆ ՎԱՍԻԼ ԱԻԱՆԵԱՆԻՑ ՀՐԱԺԱՐԱԱՆՔ*

*1904 թուին Բեդղեհէմի ս. Աստուածածին եկեղեցու յարգելի ծխականներդ պատուեցիք ինձ և ընտրեցիք երեցփոխան, որ և մինչև այս օրս ամենաջերմեռանդ և հաւատարմութեամբ ծառայեցի իմ ս. Աստուածածնին անտրտունջ։*

*Բայց վերջին տարին, ուսումնարանիս նոր հոգաբարձութեան անկանոն գործողութիւնը և անտեղի պահանջները ինձ ստիպում են հրաժարուել պաշտօնիցս։ Թէ իմ 10 ամեայ պաշտօնավարութեանս ժամանակ ինչ եմ արել և ինչպէս եմ կառավարել եկեղեցին, կը խօսեն մեր եկեղեցու հաշուեմատեանները, հոգևոր իշխանութեան ներկայացուցիչները և ծխականներիցս բազմաց մարդիկ և վերջապէս կենդանի ապացոյցն է այն երկյարկանի նոր շինած տունը, որ ներկայումս բաւականաչափ արդիւնք է բերում։*

*Այսպէս ուրեմն, պաշտօնավարութիւնս յանձնելով, ինձ յանձնել են մի փոքրիկ գումար, տասը տարի անցնելուց յետոյ, բացի սովորական եկեղեցական ծախքերից, վերանորոգութիւններից և մի տարի ուսումնարանի պահպանութեան համար ահագին ծախք անելուց յետոյ յանձնում եմ յարգելի ծխականներիդ մի նոր շինած տան 10000 րուբլանոց աւելի արժողութեամբ և մի պատկառելի գումար, որը գտնվում է վաճառականական բանկում ի շահեցողութիւն։*

*Վ. ԱԻԱՆԵԱՆՑ*

*1915 ամի*
*Յունիսի 8-ին*

# ՏԵՂԵԿԱԳԻՐ

## ՏՓԽԻՍԻ ԲԵԴՂԵՀԷՄԻ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾ. ԵԿԵՂ.

### ԱՆՇԱՐԺ ԵՒ ՇԱՐԺԱԿԱՆ ԳՈՅՔԻ

*կազմուեց 1914 թ. Հոկտեմբերի 10-ին*

# Ա Ն Շ Ա Ր Ժ - Գ Ո Յ Ք

| № № ըստ կարգի | ԿԱԼՈՒԱԾՆԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐԸ, ՏԵՂԸ, ՍԱՀՄԱՆՆԵՐԸ, ՏԱՐԱԾՈՒԹԻՒՆԸ | Կալուածագինը | Տարեկան արդիւնք Ռ. | Տարեկան արդիւնք Կ. | Ո՞ւմ է տուած վարձով | Վարձակալութեան և վարձադրամների ժամա՞նակը | Նախընթաց տարիների պարտիկները Ռ. | Կ. | Վարձ 1913 թուի Ռ. | Կ. | Քաղաքային և արքունի հարկ Ռ. | Կ. | Կալուածների կառավարութեան ծախք Ռ. | Կ. | Զուտ արդիւնք Ռ. | Կ. | ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Եկեղեցւոյ գաւթում գտնւում է իննը (9) սենեակներ ուխտաւորների համար | — | 30 | — | Ռ. խստաւորների ժամանակաւորապէս | Անորոշ | — | — | 20 | — | — | — | — | — | 20 | — | |
| 2 | Եկեղեցւոյ գաւթում զանգակատան կիցմի հին տուն երկյարկանի | 1000 | 60 | — | Վասիլ Գուրգէնեանց | Ամսէ ամիս | — | — | 60 | - | — | — | — | | 60 | — | Վերին յարկը դատարկ է |
| 3 | Զանգակատան մէջ գտնւում է մի սենեակ իւր խոհանոցով | — | 18 | – | Բագրատ Նիազեանց | Ամսէ ամիս | — | — | 18 | — | — | - | — | - | 18 | — | Սա ևս մի անպէտք սենեակ է |
| 4 | Զանգակատան մօտ ևս երկու մութ և խոնաւ սենեակներ | 500 | 36 | — | Դաբրիէլ Շահզուլեանց | Ամսէ ամիս | - | — | 36 | — | — | - | — | — | 36 | - | |
| 5 | Եկեղեցւոյ արևմտեան կողմը գտնւում է ևս երկյարկանի տուն, իւրաքանչիւր յարկը երկու սենեակով | 1500 | 144 | – | Գալուստ Դաւթեանց և Գաբր. Փլթիկեանց | Ամսէ ամիս | — | — | 144 | — | – | — | — | - | 144 | — | Գալուստ Դաւթեանը զինուոր է գնացած |
| 6 | Վերոյիշեալ երկյարկանի տան տակը գտնւում է մի սենեակ մառաղատուն իրան կից երկու անպէտք խոնաւ սենեակներով | — | — | | — | | | | | | | | | | | | |
| 7 | Մառաղատան դիմաց եկեղեցու գաւթի տակը արտաքնոցին կից մի մեծ մութ սենեակ, որը գործ է ածւում փայտի և անպէտք իրերի համար | — | — | — | — | | | | | | | | | | | | |
| 8 | Կուսանոց անապատի կողմ գտնւում է խարխուլ հին տան տեղ | 500 | — | — | — | | | | | | | | | | | | |
| 9 | Եկեղեցու գաւթի տակն գտնւում է մի տուն երկյարկանի վերին յարկը չորս սենեակ և ներքին յարկը երեք մութ սենեակ | 2000 | 240 | — | Նիկողայոս Մամուլեանց, Շողոյ Ամրոյեանց, Մանուկ Սափարեան | Ամսէ ամիս | 36 | — | 240 | – | — | – | — | – | 240 | — | Այս տան վերին յարկի 2 սենեակը յատկացրած է դպրոցին |
| 10 | Երուսաղէմեան փողոցի վերայ Յովհաննեան քարվանսարայի կից անկիւնում երկյարկանի կալուածք 2 սենեակով | 3000 | 276 | – | Փօլակի ընկերութիւն Ադամ Գէորգեան | Ամսէ ամիս | — | | 276 | — | — | | – | - | 276 | — | Այս տունը աւերակ էր և նորից հիմնովին շինեւ, 1909 թ.-ից որի աւարտելու համար գումար չը լինելու պատճառաւ, աճուրդ դրեց 4 տարւայ ժամանակով պ. Արամ Քալանթարեանցին 4 տարւայ տանավարձը սկզբից ստացեց 2600 ռուբլի |
| 11 | Մողնու I և II տուպիկներում մի տուն երկյարկանի բաղկացած 10 սենեակներից իւր յարմարութիւններով | 10000 | — | — | — | | | | | | | | | | | | |
| 12 | Եկեղեցու հիւսիսային և արևելեան կողմը ունի բաւականին մեծ տարածութեամբ դատարկ տեղեր | — | — | — | — | | | | | | | | | | | | |

# ՈՍԿԷ ԵՒ ԱՐԾԱԹԷ ԻՐԵՂԷՆՆԵՐ

| № № ըստ կարգի | Գոյքի անունը և նկարագրութիւնը (գոյն, երկարութիւն, լայնութիւն, ձև, հին և նոր լինելը). | Որքանութիւն: Ամենօրինակ թուա-ծանրութեան մէջ | Որքանութիւն: պահեստում | Որքանութիւն: ծանրութիւն (ֆունտ) | Արժողութիւն | Ծանօթութիւն |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Ոսկէ բրասլէտ կապոյտ մինաքարով . . | | 1 | 8¾ մսխ. | 26 | |
| 2 | Ոսկէ բոնբրաց (կօլիէ) 82 կտոր ոսկէ ձկնիկներից բաղկացած, 17 հատ եաղուտ, 3 հատ զմրուխտ, և 20 հ. մարգարիտ ակներով . | | 1 | 13⅛ մսխ. | 95 | |
| 3 | Ոսկէ խաչ իւր շղթայով (цѣпочка) 7 հ. փոքր բրիլիանտ . . . . . | | 1 | 2½ մսխ. | 30 | |
| 4 | Ոսկէ խաչ 10 հատ փոքր փիրուզներով . . | | 1 | 1¼ մսխ. | 20 | |
| 5 | Ոսկէ մի գրանադինի խաչ 4 հատ փոքրիկ մարգարիտներով պղնձէ շղթայով . . | | 1 | 1½ մսխ. | 3 | |
| 6 | Ոսկէ խաչ 12 փոքրիկ փիրուզներով . : | | 1 | 1 մսխ. | 10 | |
| 7 | Ոսկէ խաչ 6 փոքր բրիլիանտներով . . | | 1 | ½մ. և ⅛մ. | 32 | |
| 8 | Արծաթէ խաչ 5 ռօզով . . . . | | 1 | | 1 | |
| 9 | 3 հատ բարակ ոսկեայ շղթաններ . . . | | 3 | 13⅜ մսխ. | 60 | |
| 10 | Մի հատ արծաթեայ գէօրգեսկի զինւոր. խաչ . | | 1 | 3½ մսխ. | 1 | |
| 11 | Մի արծ. էմալի խաչ կոտրած շուրջը արծ. . | | 1 | | — | |
| 12 | Մի զոյգ ածուրնի արծաթէ բրօշկա և մի փոքր արծաթէ ձուք . . - . . | | 2 | 6¾ մսխ. | 2 | |
| 13 | Մի փոքր ոսկեայ խաչ 10 հատ մանր եաղութով 4 մանր մարգարիտով մէջը հասարակ կանաչ քար . . . . | | 1 | ¼ մսխ. | 10 | |
| 14 | Մի փոքր արծաթէ խաչ 6 փոքրիկ ալմասներով | | 1 | | 1 | |
| 15 | Մի ոսկեայ բրօշկայ մէջը մի մեծ փիրուզ բոլորքը ունի 8 հատ ալմազ ֆալշիվի (կեղծ) յուլունքներով և մանր մարգարիտներով . | | 1 | 2⅜ մսխ. | 15 | |
| 16 | Մի հատ բրիլիանտ իւր ոսկով . . . | | 1 | | 20 | |
| 17 | Մի հատ ոսկէ մեդալիոն երկփեշկանի . . | | 1 | 1¾ մսխ. | 5 | |
| 18 | Մի ոսկէ կոլիէ 31 հատ ոսկէ թերթիկներ շարած ոսկէ շղթայի վերայ . . . | | 1 | 4¼ մսխ. | 15 | |
| 19 | Ոսկէ նեզաբուտկա (ծաղիկ) 3 փոքր բրիլիանտով և մարգարիտէ թելով շուրջը պատած ոսկով . . . . . . | | 1 | ¾ մսխ. | 5 | |

# ՈՍԿԷ ԵՒ ԱՐԾԱԹԷ ԻՐԵՂԷՆՆԵՐ

| № № ըստ կարգի | Գոյքի անունը և նկարագրութիւնը, (գոյն, երկարութիւն, լայնութիւն, ձև, հին և նոր լինելը). | Որքանութիւն: Ամենօրինակ թուա-ծանրութեան մէջ | Որքանութիւն: պահեստում | Որքանութիւն: ծանրութիւն (ֆունտ) | Արժողութիւն | Ծանօթութիւն |
|---|---|---|---|---|---|---|
| 20 | 96 հատ ոսկեայ մկրտութեան զանազան մեծութեան խաչեր . . . . . | | 97 | 45 | 150 | |
| 21 | 52 հ. զանազան արծաթեայ մեծութեան խաչ. . | | 52 | 15 | 10 | |
| 22 | 95 հատ ոսկեայ մատանիներ զանազան մեծութեան և զանազան թանգագին և հասարակ ակներով . . . . . | | 95 | 30 | 400 | |
| 23 | Մի հատ ոսկեայ փող հնութիւն մի երեսի վերայ մարդու պատկեր 1707 թ. իսկ միւս երեսին քառակուսի մէջը յունական տառեր . | | 1 | | | |
| 24 | 14 հատ ոսկեայ դրամներ տաճկական և ռուսական զանազան մեծութեան և արժողութ. . | | 14 | | | |
| 25 | Ոսկէ համրիչ (տէրողորմեա) 29 հատիկներով . | | 1 | 7 մսխ. | 30 | |
| 26 | Արծաթէ համրիչ (տէրողորմ.) 89 հատիկներով . | | 1 | 13 մսխ. | 5 | |
| 27 | Ոսկէ սիրտ ոսկէ շղթ. ալմազ ռօզաներով .. | | 1 | 3 մսխ. | 20 | |
| 28 | Մի հ. ոսկէ բրասլետ 5 հ. ալմազ քարերով . | | 1 | 1½ մսխ. | 20 | |
| 29 | Մի ոսկէ խաչ 7 բրիլիանտ ակներով . . | | 1 | 1 մսխ. | 30 | |
| 30 | Մի զոյգ ոսկէ օղեր . . . . . | | 1 | | 2 | |
| 31 | Մի ոսկէ խաչ 8 բրիլիանտ ակներով . . | | 1 | ½ մսխ. | 15 | |
| 32 | Մի հատ ոսկէ խաչ իւր բարակ ոսկէ շղթայով . | | 1 | 1 մսխ. | 5 | |
| 33 | Մի ոսկէ մեդալիոն սիրտ . . . . | | 1 | 1½ մսխ. | 5 | |
| 34 | Մի ոսկէջրած խաչ ոսկէ շղթայով . . . | | 1 | 2 մսխ. | 8 | |
| 35 | Մի փոքր շարան մանր մարգարիտներ (մի փոքր ոսկեայ խաչ) . . . . | | 1 | | 1 | |
| 36 | Մի հասար. ապլիկէ խաչ 6 հ. կապոյտ քար. . | | 1 | | 2 | |
| 37 | Մի ալմազէ ֆենիկա մէջը հրեշտակ բոլորքը 8 հատ ալմազ . . . . . | | 1 | | 20 | |
| 38 | 9 հատ զանազան մեծութեան և տեսակի մանր արծաթեայ և ոսկեայ սրտեր . . . | | 9 | | 3 | |
| 39 | Մի փոքրիկ արծաթեայ կազմնակի Աստուածածնի պատկեր . . . . | | 1 | | 1 | |

# ՈՍԿԷ ԵՒ ԱՐԾԱԹԷ ԻՐԵՂԷՆՆԵՐ

| № ըստ կարգի | Գոյքի անունը և նկարագրութիւնը, (գոյն, երկարութիւն, լայնութիւն, ձև, հին և նոր լինելը). | Որքանութիւն | | | Արժողութիւն | Ծանօթութիւն |
|---|---|---|---|---|---|---|
| | | Ամենօրեայ գործածութեան մէջ | պահեստում | ծանրութիւն (քաշ) | | |
| 40 | Մի փոքրիկ բրոնզեայ մեդալիոն, որի մի երեսին կաղանու Ս. Աստուածածնի պատկեր և միւս երեսին Ս. Նիկողայոսի . . | | 1 | | 1 | |
| 41 | Մի զոյգ աժուրնի արծաթեայ բրոշկա և մի հատ փոքրիկ արծաթեայ ձեռք . . | | 2 | 5 մսխ. | 4 | |
| 42 | Մի բրասլետ 8 հատ արծաթեայ 10 կոպէկ. . | | 1 | | 1 | |
| 43 | Մի արծաթեայ բաժակ . . . . | | 1 | | 3 | |
| 44 | Մի արծաթեայ շաքարաման. . . . | | 1 | 45 | 10 | |
| 45 | Մի փոքր պատկեր երեսը արծաթ. . . | | 1 | | 1 | |
| 46 | Մի հ. ֆրաժէի հազարփեշա ռուսական ձևով . | | 1 | | 2 | |
| 47 | Մի արծաթեայ բաժակ միանարած . . | | 1 | | 2 | |
| 48 | Երկու հատ արծաթեայ օղակներով բրասլէտ. . | | 1 | | 1 | |
| 49 | Մի արծաթեայ բրոշկա 4 հատ հինգ կոպէկանոցներով . . . . . . | | 1 | | 1 | |
| 50 | Մի հատ արծաթեայ ոսկեջրած Քր. դագաղ . | | 1 | 1 ֆուն. | 20 | |



# ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԱՆՕԹՆԵՐ

| № № ըստ կարգի | Գոյքի անունը և նկարագրութիւնը, (գոյն, երկարութիւն, լայնութիւն, ձև, հին և նոր լինելը). | Որքանութիւն | | | Արժողութիւն | Ծանօթութիւն |
|---|---|---|---|---|---|---|
| | | Ամենօրեայ գործածութեան մէջ | պահեստում | ծանրութիւն (քաշ) | | |
| 1 | Երեք հատ արծաթեայ զանազան մեծութեան սկիհ իրենց մաղզմաններով . . . | 1 | 2 | 3 ֆուն. | 50 | |
| 2 | Մի մեծ ձողաբարձ խաչ սեղանի վերայ . | 1 | | 10 ֆուն. | 100 | Գործ է ածւում միայն մեծ պասին |
| 3 | Մի մեծ խաչ պատկերներով հասարակ քարերով մէջը խաչելութեան պատկեր . . | 1 | | 1 ֆ. 3 մ. | 15 | |
| 4 | Տասն և չորս հատ զանազան մեծութեան արծաթեայ խաչեր . . . . . | 4 | 10 | 7 ֆ. 79 1/2 մ. | 100 | |
| 5 | Մի արծաթեայ տապանակ . . . . | 1 | | 2 ֆ. 60 մ. | 30 | |
| 6 | Մի զոյգ արծաթեայ հրեշտակակերպ երեք ճիւղանի տակը գնդով մոմակալներ . . | 2 | | 7 ֆ. 92 մ. | – | |
| 7 | Երկու զոյգ արծաթեայ փոքրիկ մոմակալներ . | 4 | | 3 ֆ. 94 մ. | 20 | |
| 8 | Չորս զոյգ ապլիկէի մեծ մոմակալներ . . | 8 | | | 100 | |
| 9 | Չորս զոյգ հասարակ ապլիկէի մոմակալներ . | 8 | | | 10 | |
| 10 | Երկու զոյգ ննջեց. համար փայտէ մոմակալներ . | 4 | | | 28 | |
| 11 | Սուրբ Աստուածածնայ պատկեր արծաթապատ ճաճանչաւոր, զարդարուած բազմաթիւ մեծ և փոքր բրիլլիանտի և փիրուզի ակներով . | 1 | | | 100 | |
| 12 | Տասն և հինգ արծաթապատ զանազան մեծութեան Աստուածածնայ և տէրունական պատկերներ . . . . . | 4 | 11 | | 100 | |
| 13 | Մի մեծ Աստուածածնայ պատկեր, որը բազմած է հարաւային պատի մէջ, և որի արծաթ լինելը անյայտ է . . . | 1 | | | 100 | |
| 14 | Երեք հատ Աստուածածնայ պատկերներ, որոնցից 2-ը բազմած են խորանների գլխին և արծաթ լինելը անյայտ է . . . | | 3 | | 50 | |
| 15 | Քսան և երկու հատ հասարակ Աստուածածնայ և տէրունական զանազան մեծութեան պատկերներ, որոնցից մի քանիսը պահարաններով են . . . . . | | 22 | | 50 | |
| 16 | Մի հատ Աստուածածնայ պատկեր կարովի ոսկէ թել, 95 հատ փոքր մարգարիտներով . | 1 | | | 10 | |

| №№ ըստ կարգի | Գոյքի անունը և նկարագրութիւնը (գոյն, երկարութիւն, լայնութիւն, ձև, հին և նոր լինելը). | Որքանութիւն: Ամէնօրեայ ծառայութեան մէջ | Որքանութիւն: պահեստում | Որքանութիւն: ծանրութիւն (ֆնտ) | Արժողութիւն | Ծանօթութիւն |
|---|---|---|---|---|---|---|
| 17 | Երկու հատ արծաթեայ բուրվառներ . . | 1 | 1 | 39 ֆ. | 25 | |
| 18 | Երկու արծաթեայ գոտիկ ժամարարի . . | 1 | 1 | 2 ֆ. | 20 | |
| 19 | Չորս հատ արծաթեայ վակաս . . . | 1 | 3 | | 40 | |
| 20 | Մի արծաթեայ հազարփեշա . . . | | 1 | | 3 | |
| 21 | Մի արծաթեայ աղաւնի . . . . | 1 | | 3 ֆ. | 30 | |
| 22 | Մի արծաթեայ փոքր միւռոնաշիշ . . . | 1 | | 20 մսխ. | 5 | |
| 23 | Մի ապլիկէի միւռոնաշիշ . . . . | 1 | | | 3 | |
| 24 | Մի արծաթեայ մասնատուփ . . . | 1 | | 20 մսխ. | 5 | |
| 25 | Մի զոյգ սաղաւարտ մէկը արծաթեայ . . | 2 | | | 40 | |
| 26 | Մի զոյգ քշոց արծաթեայ . . . . | 2 | | 2 ֆ. | 20 | |
| 27 | Երկու հատ արծաթեայ խաչվառներ . . | 2 | | 3 ֆ. | 40 | |
| 28 | Մի զոյգ պսակադրութեան թագեր . . | 2 | | | 30 | |
| 29 | Մի հատ մեծ մետաղեայ ջահ . . . | 1 | | | 20 | |
| 30 | Եօթ հատ մեծ և փոքր ապակեայ կտորներից ջահեր . . . . . | 7 | | | 100 | |

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԳՐՔԵՐ

| №№ ըստ կարգի | Գոյքի անունը և նկարագրութիւնը | Ամէնօրեայ ծառայութեան մէջ | պահեստում | ծանրութիւն (ֆնտ) | Արժողութիւն | Ծանօթութիւն |
|---|---|---|---|---|---|---|
| 31 | Երկու մախմուրէ կազմով աւետարաններ արծաթապատ և պատկերներով . . . | 2 | | 36 մսխ. | 50 | |
| 32 | Մի հատ փոքր ձեռագիր աւետարան, որի վերայ փորագրուած է Գ տառը . . . | | 1 | | 10 | |
| 33 | Մի արծաթապատ աւետարան ձեռագիր փոքրիկ գրքով . . . . | | 1 | | 10 | |
| 34 | Մի ոսկեզօծ արծաթապատ ձեռագիր պատկերազարդ աւետարան հին և արժէքաւոր փորագրուած № 1 . . . . | | 1 | | — | |
| 35 | Մի արծաթապատ պատկերազարդ ձեռագիր աւետարան փորագրուած № 2 (հին և արժէքաւոր) . . . . . | | 1 | | — | |
| 36 | Մի արծաթապատ աւետարան փոքր գրքով . | | 1 | | 10 | |



| №№ ըստ կարգի | Գոյքի անունը և նկարագրութիւնը, (գոյն, երկարութիւն, լայնութիւն, ձև, հին և նոր լինելը). | Որքանութիւն: Ամէնօրեայ ծառայութեան մէջ | Որքանութիւն: պահեստում | Որքանութիւն: ծանրութիւն (ֆնտ) | Արժողութիւն | Ծանօթութիւն |
|---|---|---|---|---|---|---|
| 37 | Չորս աւետարան մագաղաթի հասարակ կազմով թանկագին հնութիւններ. . . | | 4 | | Անյայտ | |
| 38 | Մի հասարակ կարմիր կազմով տպած աւետարան, հասարակ ակներով և կազմի վերայ խաչ . . . . . . . | | 1 | | 5 | |
| 39 | Մի հին աւետարան մագաղաթի . . . | | 1 | | 20 | |
| 40 | Մի ճաշոց աւետարան Էջմիածնայ տիպ 1890 թ. | | 1 | | 2 | |
| 41 | Մի զոյգ ձայնագրեալ շարական . . . | | 2 | | 100 | |
| 42 | Մի զոյգ տպագրեալ շարական . . . | 2 | | | 50 | |
| 43 | Մի զոյգ հին տիպ յայսմաւուրք հնացած . | | 2 | | | |
| 44 | Մի հատ առենի ժամագիրք իւր տօնացոյցով . | 1 | | | 1 | |
| 45 | Մի զոյգ դասերի ժամագրքեր . . . | 2 | | | 2 | |
| 46 | Մի զոյգ տօնացոյց Էջմիածնայ տիպ . . | 2 | | | 2 | |
| 47 | Մի հատ խորհրդատետր . . . . | 1 | | | 1 | |
| 48 | Մի հատ աւետարան իւղաբերից . . . | 1 | | | 1 | |
| 49 | Մի ճաշոց գիրք . . . . . | 1 | | | 10 | |
| 50 | Մի զոյգ մաշտոց . . . . . | 2 | | | 2 | |
| 51 | Մի զոյգ մաղթանքի տետրեր . . . | 2 | | | 2 | |
| 52 | Մի հատ սխալմունք դասատետրի մեկնութեան Ս. պատարագի Մատթէոս կաթ. . . | | 1 | | 1 | |
| 53 | Մի հատ երգեցողութեան տաղարան . . | 1 | | | 1 | |

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԶԳԵՍՏՆԵՐ

| №№ ըստ կարգի | Գոյքի անունը և նկարագրութիւնը | Ամէնօրեայ ծառայութեան մէջ | պահեստում | ծանրութիւն (ֆնտ) | Արժողութիւն | Ծանօթութիւն |
|---|---|---|---|---|---|---|
| 54 | Ինն հատ գործածութեան շուրջառներ . . | 9 | | | 400 | |
| 55 | Եօթ հատ անգործադրելի հին շուրջառներ . | | 7 | | — | |
| 56 | Մի զոյգ շուրջառներ . . . . . | 2 | | | 10 | |
| 57 | Մի սև հին փիլոն . . . . . | | 1 | | 1 | |
| 58 | Երեք հատ սրբիչներ . . . . . | 3 | | | 2 | |
| 59 | Մի հատ մետաքսեայ սրբիչ . . . . | | 1 | | 1 | |
| 60 | Մի զոյգ տիրացուի ուրար . . . . | | 2 | | 1 | |

| №№ ըստ կարգի | Գոյքի անունը և նկարագրութիւնը, (երկարութիւն, լայնութիւն, ձև հին և նոր լինելը) | Որքանութիւն | | | | Ծանօթութիւն |
|---|---|---|---|---|---|---|
| | | Անձնօրեայ գործածութեան մէջ | Պահեստում | Ծանրութիւն (փութ) | Արժողութիւն | |
| 61 | Մի զոյգ փորուրար . . . . . | 2 | | | 6 | |
| 62 | Մի զոյգ սատինի շուրջառներ . . . | 2 | | | 10 | |
| 63 | Մի սկիհի քող ատլասէ 4 հրեշտակներով . | | 1 | | 3 | |
| 64 | Մի կարմիր գոգնոց ատլասէ Աստուածածնայ պատկերով . . . . . . | | 1 | | 3 | |
| 65 | Տասն և ինն հատ ոսկեթել ասեղնագործ գոգնոցներ Աստուածածնայ և զանազան պատկ. | | 19 | | 20 | |
| 66 | 66 հատ փոքր տեսակի հասարակ կտորներից զանազան մեծութեան գոգնոցներ . . | 10 | 56 | | 10 | |
| 67 | 14 հատ գարոզի թելով գորգեր . . . | 4 | 10 | | 10 | |
| 68 | 7 հատ սկիհի քողեր . . . . . | 2 | 5 | | 7 | |
| 69 | 21 հատ զանազան մեծութեան աւետարանի թաշկինակներ . . . . , | 2 | 19 | | 20 | |
| 70 | 18 հատ մեծ Աստուածածնայ պատկերի համար երկփեղկեան վարագոյրներ զանազան մեծութեան և զանազան կտորներից . . | 2 | 16 | | 40 | |
| 71 | 17 փոքր Աստուածածնայ պատկերի համար երկփեղկեան վարագոյրներ զանազան կտորի և զանազան տեսակի . . . | 2 | 15 | | 17 | |
| 72 | Մի ասեղնագործ պատկեր „խորհրդաւոր ընթրիք“ իւր շրջանակով . . . . | 1 | | | 3 | |
| 73 | Երեք հատ սեղանի ասեղնագործ գորգեր զանազան մեծութեան . . . . . | 3 | | | 10 | |
| 74 | 13 հատ գործածելի ժամաշապիկներ . . | 13 | | | 15 | |
| 75 | 12 հատ անգործածելի ժամաշապիկներ . | | 12 | | — | |
| 76 | 2 հատ մախմուրի մեծ սեղանի վարագոյրներ . | 1 | 1 | | 30 | |
| 77 | Մի հատ մեծ սեղանի պատկերներով զարդարուած հասար. կտորից վարագ. (հնութիւն) . | 1 | | | — | |
| 78 | Երկու հատ փոքր սեղանների համար հասարակ կտորից վարագոյրներ . . . . | 2 | | | 5 | |
| 79 | 14 հատ պարսկական զանազան մեծութեան և տեսակի խալիչաններ . . . . | 14 | | | 400 | |



| №№ ըստ կարգի | Գոյքի անունը և նկարագրութիւնը, (գոյն, երկարութիւն, լայնութիւն, ձև, հին և նոր լինելը). | Որքանութիւն | | | Արժողութիւն | Ծանօթութիւն |
|---|---|---|---|---|---|---|
| | | Անձնօրեայ գործածութեան մէջ | պահեստում | Ծանրութիւն (փութ) | | |
| | **ԿԱՀ ԿԱՐԱՍԻՔ** | | | | | |
| 1 | Կանանց դասում գտնուող երկար նստարաններ. | 4 | | | 12 | |
| 2 | Եկեղ. գաւթում գտնուող երկար նստարաններ . | 4 | | | 8 | |
| 3 | Գրքակալներ իրանց շապիկներով . . | 3 | | | 6 | |
| 4 | Փայտէ կէրոններ . . . . . | 2 | | | 2 | |
| 5 | Վառարան չուգունէ . . . . . | 1 | | | 5 | |
| 6 | Սեղաններ . . . . . . | 5 | | | 5 | |
| 7 | Սնդուխներ . . . . . . | 2 | | | 5 | |
| 8 | Դիւասեղան . . . . . . | 1 | | | 5 | |
| 9 | Լապտերներ . . . . . . | 4 | | | 4 | |
| 10 | Զանգակներ մեծ և փոքր տեսակից . . | 4 | 1 | | 20 | |
| 11 | Երկաթէ սունդուկ . . . . . | 1 | | | 50 | |
| 12 | Փայտէ սնդուկներ . . . . . | 5 | | | 10 | |
| 13 | Մի հատ մեծադիր պատկերի պահեստ իրա ապակէ դռնով . . . . . | » | 1 | | 10 | |
| 14 | Մի ապակէ խաչելութիւն . . . . | » | 1 | | 2 | |
| 15 | Մի զոյգ աւազաններ շարժական . . . | 2 | | | 30 | |
| 16 | Կոնք և տաշտ ֆրաժէ . . . . | 1 | | | 5 | |
| 17 | Կոնք և տաշտ պղնձէ . . . . | 1 | | | 3 | |
| 18 | Ոտնալուայի համար պղնձէ տաշտ. . . | 1 | | | 10 | |
| 19 | Խնկատփեր . . . . . . | 3 | | | 3 | |
| 20 | Գանձանակի թեփշի (ափսէ) . . . | 5 | | | 5 | |

Арм. ССР
им. А. Мясникяна

| № № ըստ կարգի | Գոյքի անունը և նկարագրութիւնը (գոյն, երկարութիւն, լայնութիւն, ձև, հին և նոր լինելը). | Որքանութիւն: Ամէնօրեայ գործածութեան մէջ եղածը | Որքանութիւն: պահեստում | Որքանութիւն: ծախսուածքին (ռուբ) | Արժողութիւն | Ծանօթութիւն |
|---|---|---|---|---|---|---|
| | **ԴՊՐՈՑԱԿԱՆ ԻՐԵՐ** | | | | | |
| 1 | Կայսեր Նիկողայոս II պատկերներ | 2 | | | 10 | |
| 2 | Վեհափառ Գէորգ V պատկերը | 1 | | | 5 | |
| 3 | Ս. Սահ. Պարթեւի և Մես. Մաշտոց պատկեր. | 2 | | | 3 | |
| 4 | Դասարանական նստարաններ | 20 | | | 200 | |
| 5 | Վենսկի աթոռներ | 6 | | | 20 | |
| 6 | Ամբիոն և սեղան | 1 | | | 5 | |
| 7 | Պատից կախած գրատախտակ | 1 | | | 5 | |
| 8 | Մի մեծ Թուաբանական համրիչ | 1 | | | 5 | |
| 9 | Ուսուցչական սեղան | 1 | | | 5 | |
| 10 | Իրազննական զանազան տեսակ պատկերներ | 31 | | | 15 | |
| 11 | Երկրագործական փայտէ գործիքներ | 20 | | | 5 | |
| 12 | Շարժական տառեր հայերէն և ռուսերէն | — | | | 1 | |
| 13 | Տառացոյց փայտէ | 1 | | | 3 | |
| 14 | Մեծ թանաքաման | 1 | | | 1 | |
| 15 | Զանգակ | 1 | | | 1 | |
| 16 | Կարպետ | 1 | | | 10 | |
| 17 | Ջրի տակառ և ջրի բաժակ | 1 | | | 2 | |
| 18 | Ջրի գրաֆինկա | 1 | | | 1 | |
| 19 | Լամպա | 1 | | | 2 | |
| 20 | Վառարան երկաթէ | 1 | | | 3 | |
| 21 | Սեղանի փոքր համրիչ | 1 | | | 1 | |
| 22 | Հայերէն և ռուսերէն մանկավ. և մանկ. գրքեր. | 26 | | | 20 | |
| 23 | Երկար փայտէ նստարաններ | 4 | | | 5 | |
| 24 | Մի հատ պատէ ժամացոյց | 1 | | | 20 | Յիշեալ ժամաց կախուած է եկեղեցում |

Բեթղեհէմի ս. Աստուածածին եկեղեցու աւագ-երէց՝
ԳԷՈՐԳ աւ. քահ. ՄԵՀՐԱԲԵԱՆՑ
ՅՈՎՍԷՓ աւ. քահ. ԱԲՈՒԼԵԱՆՑ

Երեցփոխան Վ. ՍԻԱԼԵԱՆՑ

Տեղեկագիրը կազմեց և հաշիւը ճշտեց Հ. ԱՅԼԻԶԵԱՆ

H A P M.
4-2532

1

ՀՀ Ազգային գրադարան
NL0165412

Арм.
4-253а